

ՅԱԿՈԲ ՊԱՏՐԻԱՐԺ ՆԱԼԵԱՆ ՆԱՐԵԿԱԳԵՏԸ

(1706-1764)

Յակոբ Նալեանի բազմահատոր գրական ժառանգութեան մէջ առանձնապատուկ փայլ ունի «Գիրք մեկնութեան աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ» քննական աշխատութիւնը: Գումգափուի մայր դպրատան հիմնադիր, Պոլսի Պատրիարք Յակոբ Նալեանին էր վիճակուած ըստ ամենայնի ճանաչման ներկայացնելու Գրիգոր Նարեկացու անունն ու գործը, փառքն ու մեծութիւնը: Ազգի եւ եկեղեցու բազում հոգսերով բեռնաւորուած, թոյլ առողջութեամբ, Նալեանը Նարեկացուն նուիրում է իր սիրտն ու հոգին, իր իմացական կեանքը: Նա մտնում է ձեռագրերի բարդ աշխարհը, ուսումնասիրում է Նարեկացու վարքը, նրա շուրջ ստեղծուած զրոյցները, աւանդութիւնները, «Մատեան»ի միջնադարեան մեկնութիւնները, օգնում է Նարեկացու երկերի տպագրութեան գործին, բանաստեղծութիւններ է գրում նրա մասին: Եւ ապա 1745 թուականին Պոլսում տպագրում է Նարեկացու «Մատեան Ողբերգութեան» երկի, մի շարք ճառերի եւ ներբողեանների մանրակրկիտ մեկնութիւնները՝ ուսումնասիրութեամբ եւ գիտական ցանկերով հանդերձ: Նոյն տարիներին, ինչպէս կարծում է հայագէտ Բ. Վ. Կիւլէսէրեան, Նալեան պատրաստում է նաեւ՝ «Համաբարբառ Նարեկի»․ «Այսպիսի տաժանակիր աշխատութեան մը, - գրում է Կիւլէսէրեանը, - Նալեան միայն կրնար անձնատուր ըլլալ՝ իր ցաւերը մոռնալու համար»¹:

Անկասկած, Նարեկացու «Մատեան Ողբերգութեան» երկի ներքին մղումով է Նալեանը պատրաստում նաեւ իր «Գիրք աղօթից ամենայն անձանց հարկաւոր» ժողովածուն, որ տպագրւում է Պոլսում 1760 թուականին: Պարզ, զիւրմբռնելի զրաբարով հիւսուած աղօթքների մի նոր փունջ է այն, որ հեղինակը յանձնարարում է ժամանա-

1. ԲԱՐԿԷՆ ԱԹՈՌԱԿԻՅ ԿԱԹՈՂԻԿՈՍ, Յուցակ ձեռագրաց Ղալաթիոյ ազգային մասնադարանի Հայոց, Անթիլիաս, 1961, էջ 114:

կակից աղօթասէր անձանց երգելու՝ «տանը թէ եկեղեցում» փնջազին՝ «մեղուանց ձայնի», «անլոնլի քարքառով», «հեգուրեամբ՝ իրրեւ հառաչանաց եւ սրտից աղաղակ»²: «Գովելով ներբողենք, - գրում է Նալեանը, «Մեսրոպայ վարդապետին, եղիշէին եւ այլոց» խորագիրը կրող աղօթքում, - պատուամբ զարդինաւոր վարդապետս եկեղեցւոյ Քրիստոսի՝ սուրբն Մեսրոպայ՝ իրրեւ երկրորդ լուսաւորիչ Հայաստանեայց, զսուրբն եղիշէ զտապանական աստուածային գրոց եւ զհամեղարան մեկնիչն սրբազան տառից, զսուրբն Գրիգոր Նարեկացին՝ զհրէշտակական վարդապետն ձագայարոյց, որ երանաշնորհ վարդապետութեամբն իւրով եւ աղօթական բանիւքն՝ բանայ զգուռն խստացեալ սրտից եւ զղջումն արտասուաց եւ ապաշխարութեան, որովք յաղեացն քոց մալեալ գկաթն շնորհաց՝ բռնութեամբ ծորեցուցանէ ի թողութիւն մեղաց, զԴաւիթ Անյաղթ փիլիսոփայն եւ սուրբն Մովսէս Խորենացին, զաշակերտս սրբոց թարգմանչացն եւ զսուրբ գրիչս աստուածային տառից...»³:

Սակայն, ինչպէս նկատեցինք, ԺԸ դարի մատենագիտական հրատարակութիւնների ցանկում, գործնական նշանակութեամբ եւ իր իմացական կշիռով բացառիկ տեղ է զբաւում Նալեանի «Գիրք մեկնութեան աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ» վիթխարածաւալ քննական աշխատութիւնը: Այսպիսի մի գործ, բնականաբար, չէր կարող դուրս մնալ ուշագրութիւնից: ԺԸ-ի դարերի նարեկացիագէտները բարձր են գնահատում այն եւ օգտւում նրանցից: «Նարեկացւոյ գործերուն մեծագոյն մասին վրայ առաջին մեկնութիւնը կամ լուծմունքը գրած է Տ. Յակոբ Արքեպիսկոպոս Նալեան, Կ. Պոլսոյ մեծանուն Պատրիարքը, 1745ին, - գրում է հմուտ նարեկագէտ, «Մատենան»ի աշխարհարար թարգմանութեան հեղինակ Թորգոմ Եպիսկոպոսը, - հոգով եւ հմտութեամբ գրուած ընդարձակ եւ կարեւոր գործ մը, որուն ընթերցումն դժուարացնող միակ բանն է շուայլ ոճը...: Անոնք, որ կը զբաղին այս հոգեւոր գիրքով, ու կը գրեն անոր մասին, ստորագրելէն առաջ, իրենց աշխատութիւնը պէտք է կնքեն Նալեան Պատրիարքի սա խօսքովը. «Ազամանդէ պալատին խնցիէ դուռ չինցի...». սա Նալեանի եզրափակիչ խօսքն է...»⁴:

1906 թուականին Բ. Վ. Կիւլէսէրեան «Լոյս» ամսագրում տպագրում է «Նալեան եւ Նարեկացի» ուսումնասիրութիւնը: Այս աշխատութեան որոշ հատուածներ յետագայում (1957) տպագրւում է նաեւ «Շողակաթում»: «Նալեանի կեանքն ու գործը, - գրում է հայագէտը, - այնքան հարուստ է եւ այնքան կնճռոտ, ծրագրած ենք արդէն, ու-

2. ՅԱԿՈՐ ՆԱԼԵԱՆ, Գիրք աղօթից ամենայն անձանց, Պոլիս, էջ 113:

3. Անդ, էջ 113-114:

4. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ, Նարեկ, արդի հայերէնի վերածննդ Թորգոմ Եպիսկոպոս, Երուսաղէմ, 1931, էջ 624, 627:

սումնասիրել հատորով մը, բայց օգտուելով ժամանակագրական պատեհութենէ մը՝ Կոլոտի վախճանման եւ Նալեանի պատրիարքութեան թուականներէն, կը հրատարակենք մեր ուսումնասիրութեան մէկ գլուխը՝ «Նալեան եւ Նարեկացի»⁵։ Բարձր գնահատելով Նալեանի մեկնութիւնը (գիտողութիւններով հանդերձ), քաջատեղեակ լինելով մատենագիտական աղբիւրներին, Բ. Վ. Կիւլէշերեան, իրաւամբ, նկատում է, որ Նարեկացու «Մատեան»ի ամբողջական մեկնութեան առաջին պատիւը պատկանում է Նալեանին։ Չկայ շնորհքով գործ մը, զոր իբրեւ վերլուծութիւն կամ մեկնութիւն կարող ըլլանք ընծայել Շնորհալի Սարգսի կամ Լամբրոնացի Ներսէսին։ Այդպիսի գործի մը ձեռնարկութեան պարծանքը կը մնայ, ուրեմն, նախ նոյն ինքն Նալեանին եւ ետքը՝ Հ. Գ. Աւետիքեանին»⁶։

Այս հարցի վերաբերեալ, գրեթէ նոյն կարծիքն է յայտնում նաեւ Գ. Վ. Աւետիքեանը. «Վասն զի չգտաւ առ մեզ ամբողջական օրինակ այն լուծմանց... արարեալ Լամբրոնացւոյն եւ ոչ ինչ մի յայտնութիւն նշանակի ի կարգի լուծմանցն կամ ի յիշատակարանի թէ՛ Սարգիս իցէ արարեալ», - գրում է նա։ Գ. Վ. Աւետիքեանը գնահատելով Նալեանի մեկնութիւնը, նկատում է, որ հեղինակը ծանրաբեռնել է բուն նիւթը՝ վարդապետական կամ բանասիրական ծանօթութիւններով եւ գիտողութիւններով. «Ամենեցունց գրասիրաց ակներեւ կայ ընդարձակ Մատեանն, զոր ի մերում դարուն երեւցոյց Յակոբ Պատրիարք Նալեան, տպագրութեամբ ի Կոստանդնուպոլիս յամի 1745, յորում բաց յաղթական բանիցն եւ զճառն սրբոյ վարդապետին առնու ի բացայայտութիւն։ Արդարեւ, - շարունակում է նա, - աշխատութիւն բազում յանձն առեալ ի գրել, որպէս եւ երեւի, բայց ընդարձակութեամբն յայլ խօսս վարդապետական կամ բանասիրական ոչ ժամանեալ տալ զճշգրիտ տեղեկութիւն առաջին եղելոց բանիցն»⁷։

Նալեանի «Գիրք մեկնութեան աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ» աշխատութիւնը բաղկացած է երկու հատորից։ Առաջինը կազմում է բուն «Մատեանի» մեկնութիւնը՝ 720 երկսիւն էջերից, իսկ երկրորդը՝ ճառերի եւ ներբողեանների. «Հատոր երկրորդ մեկնութեան ճառից եւ ներբողինաց»։ «Ի վերայ ճառի Ապարանից սուրբ խաչին», «Ի վերայ ճառի Սրբուհւոյ Աստուածածնին», «Ի վերայ ճառի սրբոց Առաքելոցն», «Ի վերայ ճառի սրբոյն Յակոբայ», «Ի վերայ Հոգւոյն սրբոյ գալստեան», «Ի վերայ սրբոյ Եկեղեցւոյ» եւ «Ի վերայ սրբոյ Պաշին»։ Ճառերի եւ ներբողեանների մեկնութիւնը սկսւում է 721 էջից եւ աւարտում է 1051 էջով։ Գիրքն ունի նախաբան

5. «Լոյս» չաթաթերթ, 1906, թիւ 15, էջ 130։

6. Անդ, թիւ 15, էջ 346-347։

7. Հ. Գ. ԱՒԵՏԻՔԵԱՆ, Նարեկ աղօթից, Վենետիկ, 1859, էջ ԺԱ։

եւ գիտական ցանկեր: Ամբողջութեամբ 1136 մեծագիր, մանրատառ էջերից բաղկացած մի վիթխարի աշխատութիւն է այն, արդէն իսկ առհաստաշէան հեղինակի մատենագիտական հզօր իմացութեան ու թափի: «Պատճառ մեկնութեան աղօթական եւ ներբողական գրքոյն սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ» խորագրով նախաբանում (էջ 16-17) Նալեանն ընթերցողին է ներկայացնում իր մեկնութեան ստեղծագործական պատմութիւնը: Իսկ երկերի մեկնութեան նախաբանը, որ կրում է «Նախագրութիւն մեկնութեան աղօթից եւ ներբողինեաց գերազանց եւ հրեշտակական վարդապետին մերոյ սրբոյն Գրիգորի Նարեկացւոյն» խորագիրը, բաղկացած է 17 մեծագիր, մանրատառ, երկսիւն էջերից եւ բաժանւում է հինգ մասի: Դրանցում լուսաբանւում են Նարեկացու կեանքի ու անհատականութեան հետ կապուած հարցեր. «Առաջին. գերազանցութիւն սրբոյն Գրիգորի ի կողմանէ ծննդեան, անուանակոչութեան, հասակի եւ կուսական մաքրութեան», «Երկրորդ. գերազանցութիւն սրբոյն Գրիգորի ի կրթութենէ եւ ի ներհեղական շնորհաց», «Երրորդ. գերազանցութենէ խոնարհութեան եւ զսիրոյն առ Աստուած, առ սուրբն եւ առ ընկերն», «Չորրորդ. գլուխ գերազանցութենէ զղջման եւ զաղօթական գրքոյ սրբոյն Գրիգորի», եւ «Հինգերորդ. գերազանցութենէ սրբոյն Գրիգորի ի կողմանէ սբանչլեացն»: Սրանց յաջորդում են՝ «Պատճառ մեկնութեան աղօթական եւ ներբողական գրքոյ սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ» եւ «Յայտարարութիւն նախերգանի բոլորի սուրբ գրքոյս» հատուածները, որոնք հետաքրքիր են հարցի պատմութեան եւ այլ առումներով:

* * *

Նալեանը հաշուի առնելով, «Մատեն»ի լեզուի եւ ոճի բարդութիւնը, կանխապէս ծրագրում է ներկայացնելու սոսկ խրթին, դժուարամարս բառերի բացատրութիւն. բայց աշխատանքի ընթացքում, ինքն էլ չիմանալով թէ ինչպէս, նա անցնում է նախատեսուած սահմանագիծը եւ խրթին բառերը բացատրելու հետ միասին, նաեւ տալիս է մեկնութիւնը՝ համապատասխանաբար: «Արդ քանզի մտաբերելով մեր, թէ ներքին գեղեցկութիւնք բանից սրբոյ Վարդապետիս բառիւք իրր ամպովք թաքուցեալք էին, վասն այնորիկ ջնանացք ձեռնարկել առ ի զբառս լուծանել, եւ մինչ ժամանեալ հաք ի գլուխն Հ եւ գոմանս ի բանիցն եւս մեկնեալք...»: Հոռոմկլացի Պետրոս աստուածաբան վարդապետը ծանօթանալով Նալեանի աշխատանքին, ոգեւորւում է եւ թախանձում Նալեանին այդ եղանակով մեկնել ողջ «Նարեկը» եւ ներբողները. «Տեսեալ գայնս սիրելի եղբայր մեր Հոռոմկլացեցի Պետրոս Աստուածաբան վարդապետն, ո՛չ սակաւ համարելով զբաղմունս

մեր եւ զհոգս ամենից եկեղեցեաց եւ ազգիս, սկսաւ թախանձել զմեզ եւ աղաչել, թէ՛ զրոյրն այսպէս առնել աղերսեմ, հոգի վարդապետ. եւ մեք զիջեալ ի խնդիր նորա՝ բաց ասել չկարացաք, վասն որոյ մոռանալով զտկարութիւն մեր, յայնմ տեղւոյն սկսաք ի վերայ ամենայն նիւթաւոր բանիցն առնել զմեկնութիւնս մինչեւ ի վերջն. եւ ի յսկիզբէն վերստին սկսեալ հասուցաք մինչեւ ցանդը»⁸։ Այնուհետեւ, նկատում է Նալեանը, – Յարութիւն աստուածաբան վարդապետը եւս, ծանօթանալով զործին, առաւել քան առաջինը, թախանձում է Նալեանին կազմելու նաեւ մեկնութեան իւրաքանչիւր գլխի համառօտագրութիւնը. «Վերստին հարկաւորեցաք, – գրում է Նալեանը, – ի մոռանալ զգրադմունս մեր եւ ի ժամանակէ՝ իրը զժամանակ եւ զպահ գողանալով, ի մէջ երկուց ամաց աւարտեցաք զսա ի փառս Աստուծոյ եւ ի պատիւ հրեշտակական վարդապետին»⁹։

Նալեանի երախտիքը մեծ է նախ եւ առաջ նրանով, որ Նարեկացու «Մատեան Ողբերգութեան» պոէմի, ճառերի ու ներդրոցների մեկնութեան ծանր ու դժուարին խնդիրը իրականացնելու հետ միասին, առաջին անգամ էլ տպագիր խօսքով (1745 թ.), ընթերցողին է ներկայացնում նաեւ Նարեկացու կեանքի ու գործունէութեան ծանօթանծանօթ էջերը՝ մի հնարաւոր ամբողջութեան մէջ եւ գնահատում է «Նարեկը»։ Սա յիրաւի, խոշոր պատմագրական երեւոյթ է։ Հայագիտական այսօրինակ քննական մենագրական աշխատութեան երեւան գալը, ինքնին ուշագրաւ երեւոյթ էր։ Թէեւ Նալեանը, իր դարի ծրնունդը լինելով, իսկ դարը կրօնական էր (Լէո), ուսումնասիրութիւնը առաջ է վարում առաւել քան բանաստեղծական–սրբախօսական (եթէ կարելի է այսպէս ասել) եղանակով եւ մի աներեր յատկով է խօսում Նարեկացուն վերագրուած հրաշագործութիւնների, սբանչելագործութիւնների, նրա շուրջը ստեղծուած առասպելական զրոյցների ու աւանդոյթների մասին (որոնք պատճառաբանում են պատմականօրէն) եւ անշուշտ, անառարկելի չեն նաեւ նրա բոլոր փաստարկումներն ու հարցադրումները, սակայն, այսուամենայնիւ, Նարեկացու վարքը, անհատականութիւնը, նրա կեանքն ու գործունէութիւնը եւ մանաւանդ «Մատեան Ողբերգութեան» երկը նա քննում, մեկնաբանում, գնահատում է հիմնականում պատեհաբանալ սկզբունքով, գիտականօրէն, ժլ դարի կրօնա–ազգային, լուսաւորական առաջադէմ բանաստեղծ–գործչի մտահայեցացով։

Տեսնենք թէ Հայոց ցաւաշատ կեանքի ի՞նչ խնդիրներ է բարձրացնում, ի՞նչ հարցեր է առաջադրում եւ լուծում ժլ դարի լուսաւորականը՝ ժլ դարի հանճարեղ բանաստեղծի «Մատեան Ողբերգու–

8. ՅԱԿՈԲ ՆԱԼԵԱՆ, Գիրք մեկնութեան աղօթից․․․, էջ 15։

9. Անդ, էջ 15։

թեան» պոէմի եւ այլ երկերի մեկնութեան, նրա կեանքի առանձին էջերի լուսարանութեան եւ նրան նուիրուած իր բանաստեղծութիւնների միջոցով:

«Մատեան»ի մեկնութեան իր զգրափակիչ, չափաբերական տողերի մէջ, Նալեանը համեստօրէն նկատում է, որ ինքը աղամանդեայ զղակի համար հազիւ թէ կարողացել է խեցիէ մի դոնակ բացել... եւ կամ թէ ծովից մի կաթիլ ջուր հանել՝ «Զբիւրոց բանից զմինն յայտ արարի»:

Որ զմի հատոր զաղօթից բան,
Յոգնիմաստից ըշտեմարան,
Ըստ իմ կարի յորդ քրտնաջան,
Յաւարտ ածի մեկնողական:

Թէպէտ սրբոյս բանիցն ոսկեայ,
Լուծումն ետու գէտ պղնձեայ,
Կամ զըզեկին աղամանդեայ,
Դուռնն եղի իրբու խեցեայ¹⁰:

Սակայն Նալեանը «Մատեան»ի աղամանդեայ զղակի համար, անթաքուստ սիրով ու հմտութեամբ, պատրաստում է ո՛չ թէ «խեցեայ» դոնակ, այլ՝ աղամանդեայ վիթխարի մի դուռ եւ այդ մուտքով յառաջանալով մտնում է «Մատեան»ի ներքին բոլոր զաղտնարաններն ու խորշերը, վերծանում է նրա ծածուկ մտքերը, մատնացոյց անում նրա արուեստի հրաշքները: Նալեանը Նարեկացու «Մատեան»ը քննում, գնահատում է իրրեւ մի սրբազան գիրք, իրրեւ մի երկնապարգեւ, անօրինակ ստեղծագործութիւն: Թէ՛ Նարեկացու վարքի, գործունէութեան շարադրանքը, եւ թէ «Մատեան»ի մեկնութիւնը՝ Նալեանը առաջ է վարում համեմատութիւնների, հակադրութիւնների ու զուգահեռների եղանակով, քննական անսահմանափակ, լայն դաշտի վրայ: Այս կերպ Նալեանը ծրագրում է իրականացնել երեք խնդիր՝ միաժամանակ. առաջին՝ ցոյց տալ «Մատեան»ի եւ «Աստուածաշնչի» գաղափարական կապն ու յարակցութիւնը: Երկրորդ՝ մատնանշել քրիստոնէական հաւատքի, բարոյական աստուածաբանութեան ու գիտական փրիսոփայութեան գաղափարականին ընդհանրութիւնները, բարոյագիտական այն չափերը, որոնք անհրաժեշտ էին Հայոց ներքին կեանքի, հայ կենտրոնական եկեղեցու զիրքերի ամրապնդման, մարդու բարոյական վերափոխութեան համար, եւ երրորդ՝ հայ ժամանա-

10. Անդ, էջ 720:

կակից սերունդների բազմակողմանի եւ հարուստ գիտելիքներ տալու նպատակով՝ ծանօթացնել նրանց յունա-հռոմէական եւ հայ հին եւ միջին դարերի գիտութեան, գրականութեան, պատմութեան, փիլիսոփայութեան ու արուեստի նուաճումներին: Այս նկատառումներով Նալեանը Նարեկացու «Մատեան»ի ատեն մի բառ, բառակապակցութիւն, կամ ամէն մի տող մեկնաբանելիս, բուն աղբիւրագիտական, աստուածաշնչային բացատրութիւնը տալուց յետոյ, բերում է համապատասխան օրինակներ նաեւ ազգային եւ ընդհանուր, կրօնական եւ աշխարհային կեանքից, յունա-հռոմէական, հայ հին ու նոր դասական գործիչներից՝ Արիստոտել, Հոմերոս, Էսքիլէս, Սոփոկլէս, Եւրիպիտէս, Հերակլիտէս, Դեմոկրիտէս, Սոկրատ, Պլատոն, Փիլոն, Պորփիր, Պիթագորաս, Պրոկղ, Ալեքսանդր Մագիստրոս, Մաշտոց, Խորենացի, Եղիշէ, Ն. Շնորհալի, Ն. Լամբրոնացի, Մ. Գոշ, Յովհաննէս Ծործորեցի, Ղուկաս Վանանդացի եւ այլք, յիշում նրանց կեանքի ու գործունէութեան արժանայիշատակ էջերը, հիմնադրում է Նարեկացու հայեացքները, նրանց ստեղծագործութիւնների համապատասխան օրինակներով: Դասականներից բացի, Նալեան առատօրէն օգտւում է նաեւ դիցաբանութիւնից ու ժողովրդական բանահիւսութիւնից, մէջբերումներ է անում զրոյցներից, առասպելներից, աւանդութիւններից, բազմաթիւ խօսուն օրինակներով հաստատում է Նարեկացու «Մատեան»ի իմացաբանական, բարոյագիտական զրոյթները եւ այդ եղանակով որոշում հանճարեղ բանաստեղծի խօսքի կշիռը, նրա տեղն ու դերը՝ ընդհանուր եւ ազգային գրականութեան պատմութեան մէջ:

Դժուար, չափազանց դժուար է յաղթահարել Նալեանի մեկնութիւնը հենց թէկուզ միայն այս առումով: Անհնարին է մտովին դասել, դասակարգել այն թեւաւոր մտքերը, զրոյցները, առասպելներն ու պատմութիւնները, առածներն ու ասացուածքները, առակներն ու հանելուկները, որոնց Նալեանը անդրադառնում է իր մեկնութիւնների ժամանակ: Անհնարին է նշել գործիչների, պատմական եւ առասպելական բոլոր անձանց անունները, վերյիշել նրանց մտքերը, որոնք սփռուած են «Գիրք մեկնութեան ազօթից սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ» 1136 երկիւն, մանրատառ էջերում: Այս ամէնը կը պահանջի ստեղծելու Նալեանին նուիրուած մի ստուարածաւալ մենագրութիւն, որի տեղը բաց է, եւ յուսանք, որ այդ բացը կը լրացնեն հայագիտութեան երախտաւոր նոր սերունդները...

Նալեանը «Մատեան Ողբերգութեան» պոէմի բարձրագոյն արժէքը համարում է նրա փանաշողական, ֆենադատական յատկութիւնը, հաւատքի, իմաստութեան, գիտութեան, խրատանքի միջոցով կեանքը, իրերի աշխարհը ճանաչելու, հասկանալու, վերարտացոյցելու Նարեկացի-գեղազէտի աստուածային շնորհը, նրա երկի սքանչելական,

կախարդական արուեստի ու բովանդակութեան կուռ ներդաշնակութիւնը, վերընթաց գիծը: Այս առումով, յիշաւի Նալեանի ուսումնասիրութիւնը պէտք է գնահատել իբրեւ հայ նորագոյն շրջանի գրականագիտութիւնն սկզբնաւորող երեւոյթ, իբրեւ Նալեանի քննական եղանակի անաւարկելի նուաճում:

Նալեանը, Նարեկացի գեղագէտի մեծութիւնը, «Մատեն»ի իրական, ճանաչողական հզօրեղ ոյժը ցոյց տալու նպատակով, նրան համեմատում է հին յունական հռչակաւոր մատերիալիստ փիլիսոփաներ Դեմոկրիտի եւ Հերակլիտի հետ. «Վասն որոյ, – գրում է Նալեան: Նարեկացու մասին, յիշելով Դաւիթ Անյաղթի համապատասխան խօսքերը, – ո՛չ միայն քարեաւ մնալ կենցաղոյս հեշտութեանց ասել ըղձակերտէր, այլ եւ մանաւանդ գեր ի վերոյ գագաթանն գնմէր...», զիրողութեամբ աշխարհիս ծիծաղելով, երբեմն իբրեւ զՀերակլիտէս՝ լալով»¹¹... Ուրեմն, ըստ Նալեանի, Նարեկացի գեղագէտը «Գեր ի վերոյ աշխարհի գագաթանն ճեմէր», բովանդակ աշխարհն ամբողջութեամբ՝ աստուածային եւ մարդկային իրողութիւնները (իրականութիւնը) իր ամենատես հայեացքի տակ առնելով, վերարտացում է՝ երբեմն ծիծաղելով՝ կեանքի իրողութիւններին անհեթեթութիւններին, մարդկային հոգու թուլութիւններին վրայ, երբեմն լացով՝ կեանքի անարգարութիւններին, բանական գոյի սխալ ընթացքին, անճարակութեան, մարդկային հասարակութեան անարդար յարաբերութիւններին, անհիմն նիւթապաշտութեան ու այլ ցաւերի համար...», եւ այս բոլոր աստուածային իմաստութեամբ: Նալեան մեծ հմտութեամբ, հոգերանական նուրբ եւ խորը դիտումներով բացայայտում է «Մատեն Ողբերգութեան» պոէմի այս սուր, հակադիր, երկակի բնոյթը՝ ծիծաղ ու լաց, ցաւ ու զղջում, բողոք եւ հառաչանք, լոյս ու խաւար, յուսախաբութիւն եւ հաւատ, ողբ եւ սթափում...: Այս բոլորը, Նալեանի հասկացութեամբ, Նարեկացուն դարձնում են մի առեղծուածային յայտնութիւն, մի լեզենդար հերոս, մի նոր Քրիստոս, մարդ աստուածացած, մի նոր անմարմին էութիւն, եւ կամ՝ մի նոր Պրոմէթէոս, որ տառապում է մարդ հոգածնի ցաւերով եւ դեղ որոնում նրա համար: «Սա մեզ երկրորդ Պոմփիքեւս, – բացականչում է Նալեանը, – գողացեալ գիտւր յԱստուծոյ եւ շնորհեալ մարդկան»¹²: Այսպիսի համեմատութիւնը վեր է ամէն գնահատանքից (երբ հաշուի ենք առնում նաեւ ժամանակը): Չէ որ Պրոմէթէոսը Աստծու կամայականութիւններից մարդուն, նրա իրաւունքը պաշտպանելու համար, աստուածների բնակարան Օլիմպիոսից փախցնում է կրակը՝ նուիրում մարդկանց, եւ Զեւսը դաժանորէն

11. Անդ, էջ 5-6:

12. Անդ, էջ 6:

պատժում, չղթալում է նրան: Կրակն աստուածային, յաղթանակի, յոյսի, կեանքի, շարժման, մարդկային հասարակութեան կենսունակութեան ոյժի այդ խորհրդանիշը, Նարեկացին վերցնում է «ամենագութ», «ամենարարի», «ամենաստեղծ», «ամենակարող», «անձև» եւ «անմարմին», «անշունչ», բանական գոյից՝ Աստծուց, կեանքի մշտնջենականութեան այդ հաւաստիքը, պրոմիթեւեան լեգենդար այդ կրակն, ահա, Նարեկացին խլում է երկնային թագաւորից եւ շնորհում՝ «կենդանի», «չնշաւոր», «մարմնաւոր», «Հոգեղէն», բանական գոյին՝ մարդուն, որպէսզի նա, որ ի ծնէ ամենակարողը չընչաւոր էակների մէջ՝ «ծառը պողաբեր», «գարդը տիեզերքի»՝ չմնայ անպտուղ, չհեռանայ ինքն իրերից, ճանաչի իրեն, ոյժ ներարկի իր մէջ զիմպրելու շարին, ամուր կանգնի իր հողի վրայ: Նալեան այս համեմատութեամբ մարմնաւորում է Նարեկացու անչափելի սէրը դէպի մարդը, երեւութականացնում է նրա տառապանքը, ցաւը, մոտավախութիւնը, մարդու ճակատագրի նկատմամբ. սրանք հարցեր, խնդիրներ են, որոնք մարմնաւորում են «Մատեան»ի էջերը՝ ծայրից ծայր: Աստուած ողորմութիւն է պահանջում բանական գոյից, մարդուց եւ ո՛չ զոհ, ասում է Նարեկացին:

Եւ արդ, տո՛ւր բարեգութ, աղաչեմ զքեզ, տո՛ւր ինձ ողորմութիւն, Որ զայսուսիկ դու ինքնին քեզէն քոյովդ բանիւ մեզ սահմանեցեր՝ Ասելով, թէ՛ Տո՛ւր զայդ նուէր յանուն փրկութեան ձերոյ Աստուծոյ, Եւ սուրբք եղերուք, զի ողորմութիւն կամիմ եւ ո՛չ զպատարագ¹³:

«Մատեան»ում ծայրից-ծայր իշխում է բարձր կենսափրկիսոփայութիւնը. դա Հայոց Ժ-ԺԴ դարերի վերածննդի գրականութեան յատկանիշներից մէկն է: Այն առաւել շօշափելի է դառնում, երբ լսում ենք Նալեան Նարեկացիագէտի մեկնաբանութիւնը՝ «Մատեանի», «Ինքնազատանքի», «յանդիմանութեան», «եղբայրանքի» բուժիչ, վերանորոգիչ, կենսատու յատկութիւնների վերաբերեալ: Հենց այս ելակէտով էլ Նալեանը համարձակում է Նարեկացու «Մատեան Ողբերգութեան» երկը (իբրեւ մարդու կատարելութեան, վերափոխութեան, խորին խորհուրդ) կոչել «Համառօտ Աստուածաշունչ» կամ «Երկրորդ Աւետարան»¹⁴:

Մարդն է հարի ծնունդ տուողը, նա ինքն է իր մէջ բուն դրած արատների պատճառը: Նա է իր ներքին թշնամին, նա իր մեղադրանքով, իր սխալմունքով է հեռանում ինքն իրենից, եւ հաւասարում անբան անասունների. ուստի մարդը ինքը պէտք է ձգտի դուրս գալու

13. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ, Մատեան ողբերգութեան, աշխատասիրութեամբ՝ Ա. Ա. Ղազինեանի, Երևան, 1985, էջ 261:

14. ՅԱԿՈԲ ՆԱԼԵԱՆ, Գիրք մեկնութեան աղօթից, էջ 5:

այդ ճղնաժամից եւ տնօրինի իր կեանքի ընթացող՝ ամենակատարեալի օրինակով՝ բարութեամբ, իմաստութեամբ եւ խիզախութեամբ (Դ. Անյաղթ, Գր. Նարեկացի), չէ որ «Աստուած մարդացաւ, որ մարդն աստուածանայ...»: Սա յիրաւի նոր, քրիստոնէական վերածննդի գաղափարախօսութիւնն է: Աստծու կամայականութիւնը, դաժանութիւնը, վրիժառութիւնը բացառուած է Նարեկացու մօտ: Աստուած բարի հայեացքով է նայում մարդուն, բայց մարդը երախտամոռ է, ոտնահարում է բնութեամբ իրեն տրուած իրաւունքները, շեղում է իր սահմանից. հենց սա է Նարեկացու համամարդկային ողբերգութեան հիմնական հարցը, նրա աղերսանքի բուն պատճառը, յարուցիչը, աղերս որ նոյն չափ զօրաւոր է. «Բարձրացրու, ուղղի՛ր գետաբեկ ընկած ծառս բանական» – թախանձում է Նարեկացին: «Բժշկու՛թիւն եմ աղերսում հոգուս», «չարի արարքով շեղուած եմ ճամբից», «տո՛ւր երանութիւն», «տո՛ւր ողորմութիւն»: Այո՛ւ, մարդու, բանական գոյի վերափոխութեան հարցն է «Մատեան»ի կենսահայեցողութեան խորին խորհուրդը եւ հենց այդ է պատճառը, որ Նալեան «Մատեան»ին վերագրում է աստուածաշնչային դեր: «Մատեան»ը Աստուածաշունչ կոչելու վերաբերեալ առաջին տպագիր խօսքը, որքան մեզ յայտնի է, պատկանում է Նալեանին: Դա մի ընդհանրացուած եւ համարձակ հայեացք է, որ պէտք է ճիշտ հասկանալ: Նալեան արձագանգում է ժողովրդին: Ժողովուրդը դարեր շարունակ պաշտել է «Մատեան»ը իբրեւ «Համառօտ Աստուածաշունչ» կամ «Երկրորդ Աւետարան»: Յայտնի է, որ «Մատեան»ի յատկապէս «Ընկալ քաղցրութեամբ» (ԺԲ⁹) եւ «Որդի Աստուծոյ» (ԽԱ³) բանբերի նշուած հատուածները ասուել են իբրեւ ամէնօրեայ ազօթք: Նարեկացու «Մատեան»ը Աստուածաշնչի հետ համեմատելով՝ Նալեան կամենում է շեշտել բանաստեղծական այդ քերթուածի բացառիկ մեծութիւնը, նրա ընդհանուր, հանրագիտական, համակարգային, խրատական, բարոյա-փիլիսոփայական վարդապետական բնոյթը: «Մատեան»ը բացատրում է Նալեան, ինքնին աստուածային եւ մարդկային յարաբերութիւնների նոր, իւրատեսակ համափիւսումձք է, մի մշտնջենական կշռամատեան, որ խօսում է բոլոր ժամանակների, բոլոր մարդկանց հետ, ցերեպփանցում է բոլոր բանական արարածների հոգիները...: Յայտնի է, որ նման դեր է վերապահում իր երկին նաեւ ինքը՝ Նարեկացին:

Եւ արդ, ընկալ՛ զայս հիւսուած բանի աղիողորմ հեծեծանաց,
Եւ հոտոտեսցի՛ս յայս նուէր բանի անարիւն զոհի, թագաւոր երկնի...
Պատմեսցի՛ ի յականջս ազգաց
Եւ քարոզեսցի՛ ի լուր ժողովրդոց,
Նկարեսցի՛ ի դրունս իմաստից

Եւ տպաւորեսցի՛ ի սեամս զգալութեանց,
 Իբր կենդանեաւ զի՛մս պատմեսցէ
 Խոստովանեալ զանօրէնութիւն:
 Եւ թէպէտ վախճան ընկալայց իբր զմահացու,
 Այլ յարակալութեամբ բանի այս սոփերի
 Գրեցա՛յց կենդանի¹⁵:

Բայց դարձեալ լսենք Նալեան նարեկացիագէտին, տեսնենք թէ առաւելապէս ի՞նչ ի նկատի ունի «Մատեան Ողբերգութեան» երկը «Համառօտ Աստուածաշունչ» կոչելու: «Եթէ, – գրում է Նալեան, – ամենայն գիրք աստուածաշունչ օգտակարք եմ առ ի վարդապետութիւն ե՛լ ի խրատ ե՛լ ի յանդիմանութիւն, զի՞նչ գոն ի կրթութեան սրբոյն Գրիգորի, որք ո՛չ իցեն եղանակ վարդապետութեան...»¹⁶:

Խրատքը կատարելութեան, յանդիմանութիւնը, ինքնաքննադատանքն ու եղբայրականքը, Նալեան նկատում է իբրեւ «Մատեան»ի արուեստի իմացականութեան հիմնային գծեր, իրականութեան ճանաչման եւ արտացոլման վառ յատկանիշներ: Թւում է, թէ Նալեան ինչի՞նչ հափերով ըմբռնում է քննադատական ուղիով (այսօրուայ արտայայտութեամբ) էութիւնը: Յիշաւի, «Մատեան»ում ծայրից ծայր իշխում է մարդկային իրողութիւնների անսահմանափակ, անզիջում, առողջ քննադատութիւնը: Նայի՛ր երկնքից, դիմում է Նարեկացին երկնային թագաւորին, եւ տես թէ ի՛նչ է կատարում երկրում:

Հայեա՛ց, Տէ՛ր, յերկնից զուարթ քաղցրութեամբ
 Յամենակործան վտանգ նեղելոյս
 Եւ արա՛ անդորր հանգստական դիւրաւոր
 Ի բազմատաղնապս հեծութենէ:
 Եւ զյարուցեալ գումարս սատակչաց,
 Եթէ սպառազէնք այսական դժնեայ հնարաւորութեամբ
 Բուռն մարտակցաց պատկանեալ զինութիւն,
 Եթէ մեղաց տգեղ եւ քո ատելի կերպարանք,
 Եթէ ցաւոց եւ ախտից վատնիչ եւ կորստական նշմարանք,
 Մերժեսցե՛ս, հանցե՛ս, հատցե՛ս, խափանեսցե՛ս
 Եւ հալածեսցե՛ս՝ հեռի սահմանաւ խաղառ տարադրեալ
 Անդարձ որոշմամբ վերստին կորստեանն,
 Եւ կառուցե՛ս, կացուցե՛ս նպատակ կենաց եւ ամուր մահարձան
 Զնշան խաչիդ՝ ապաւինելոյս ի քեզ, փրկութիւն¹⁷:

15. Մատեան ողբերգութեան, Բան 2Ը, էջ 598-599:

16. ՅԱԿՈԲ ՆԱԼԵԱՆ, Գիրք մեկնութեան աղօթից... էջ 5:

17. Մատեան Ողբերգութեան, Բան 2Թ, էջ 604:

Եւ յայսմ անպարտ եւ անպատիր
 Եւ անուանելի արուեստից ահաւորիդ մեծութեան՝
 Լուծցին որոգայթքն զաղտնածածուկք սատանայականք,
 Կապտեսցի՛ն մեքենայքն, վատնեսցի՛ն գայթակղութիւնքն,
 Խայտառակեսցի՛ն խաղբիցն զրութիւնք,
 Յայտնեսցի՛ն երեւոյթք որսոյն,
 Գտցի՛ն նենգողին ծուղակք,
 Վերասցի՛ն վարմին վերարկութիւնք,
 Տոչորեսցի՛ն որոմանցն բոյսք,
 Նղովեսցի՛ն բռնաւորին չարաբանութիւնք,
 Կտրեսցի՛ն լար խարէութեան ի մահ որսողին,
 Պարսեսցի՛ն պատրողին բանսարկութիւնք,
 Պակասեսցի՛ն գէնք զրպարտողին,
 Անկցի՛ն սուսերք մահաբերին...¹⁸ :

Այսպիսի քննադատանքը համայնապարփակ՝ հասարակական, տնտեսական, կրօնա-իրաւական, կրօնա-բարոյական, կենցաղային, դասային, ամէն բնոյթի (երբ վճռարար ատեան են կանչուում բոլոր ոճրագործները, նենգողները, բռնակալները, զրպարտիչները, կեղեքիչները, մահ որսողները, ուտիչ ցեցերը, չողոքորթները եւ նրանց համար արժանի դատավճիռ է հաստատուում), բնականաբար չի կարող պարփակուել միջնադարեան ոչալիզմի կամ սոսկ միստիցիզմի չրջանակներում:

Ի դէպ հենց այստեղ մի երկու խօսք Նարեկացու միստիցիզմի մասին: Յաճախ ենք կարդում կամ լսում այն մասին, թէ Նարեկացին միստիկ է, նրա «Մատեան»ը միստիկական ստեղծագործութիւն է եւ այլն՝ առանց հիմնաւորուած բացատրութեան: Այս կապակցութեամբ բացատրութիւն է միայն մեծանուն գիտնական Արշակ Չոպանեանը: «Գործ գոր, - գրում է Չոպանեան Նարեկացուն նուիրուած իր սքանչելի ուսումնասիրութեան մէջ, - ... ամբողջ մրրիկ մըն է, անհունի մէջ զալարուող զգացման մը եւ չեմ գիտեր գործ մը անկից աւելի զօրաւոր ըլլայ: Էջեր կան հոն, ուր մեր բանաստեղծը մարգարէներուն ուժին հաւասարած է, եւ էջեր ուր Շեքսպիրի հով մը կ'անցնի: Ամբողջ միստիքականութիւնն է այդ գործը եւ ամբողջ քնարերգութիւն...: Վանականի քերթուած է սա, պարզ եւ սակայն ամբողջական հոգեբանութեամբ մը միստիքականութեան ցաւագին վէպը...»¹⁹: Սակայն սա չէ բոլորը...: Չոպանեանը զարմանալիօրէն ճիշտ է բնութագրում Նարեկացի հաւատապաշտի, անընդգրկելի, անչափելի հումանիզմը. «Նարեկացին այն սխալաստիկ աստուածաբան-

18. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ, Մատեան Ողբերգութեան, էջ 604:

19. ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆ, Դէմքեր, Փարիզ, 1924, էջ 3, 11:

ներէն չէ, - գրում է նա, - որոնք յստակ սահմանումներով կ'որոշեն աստծոյ յղացումը, հանդերձեալ կեանքի մանրամասնութեան վրայ կը վիճեն, կամ բնագանցական պատճառաբանութիւններով մարդու հոգին ու կեանքը կը բացատրեն»: Աւելին, Չոպանեան նկատում է, որ Նարեկացին պնդում է, արտացոլում է ողջ մարդկութեան սիրտն ու հոգին. «... գործը ընդհանուր եւ մասնաւոր է միանգամայն, մարդկային եւ միանգամայն անհատական, կը զգանք, որ իր վրայ խօսած ատեն, բանաստեղծը ամբողջ մարդկութեան հոգին իր մէջ խտացած կը տեսնէ: Ինքզինքը ինկած զգացող այդ էակը, որ բարձուցնելուն աչքը յառած գթութիւն կ'աղաչէ, այդ էակը ամբողջ մարդկային ազգն է»²⁰: Ուրեմն հենց Չոպանեանի վերլուծումների մէջ բացառւում է միատիցիզմը նեղ առումով: Նարեկացու միատիքականութեան մէջ նա տեսնում է մարդասիրութեան խորին խորհուրդը: Յիրաւի, եթէ «միատիկան կրօնական հաւատն է, այսպէս կոչուած անդրշիրմեան աշխարհի հետ մարդու կապի, հաղորդակցութեան մասին, ապա Նարեկացու «Մատեան»ում անդրշիրմեան կեանքը դուրս ձգտում գոյութիւն չունի: Ընդհակառակը, այստեղ կայ իրական փայփայանք, երազանք, մարդկային, երկրային եւ իրական կեանքի կատարելութեան իտէալ եւ կայ՝ տառապանք, ցաւ, սոսկում, տանջանք երկրային կեանքում իշխող անկատար, անմարդկային յաղաբերութիւնները գոյութեան համար: Աւելին, եթէ միատիկական ստեղծագործութիւնն իրենից ներկայացնում է ամբողջովին կրօնական մի երկ, որն իր առեղծուածային, վերացական մղումներով պաշտպանում է սոսկ կրօնա-փիլիսոփայական, վերացական հայեցողութիւն, կամ մի գողտրիկ խորհրդածութիւն, որի հիմքը կազմում է հաւատը գերբնական ուժերի նկատմամբ եւ գլխաւոր հաղորդակցութիւնը, կապը Աստծու հետ, ապա Նարեկացու մէջ ցաւը, սոսկումը կապուած է մարդու ճակատագրի հետ (այստեղ ի նկատի ունենք նաեւ Հայոց եկեղեցական, կրօնա-ազգային կեանքը, որ մտահոգում է հանճարեղ երգչին (այս մասին այլ առիթով):

«Մատեան»ում գլխաւորը մարդն է, մարդկային անկատար յարաբերութեան հակադրութիւնը, աստուածայինիւր՝ մարդուն ազնււացնելու, ուղղելու, կատարելագործելու, վերստեղծելու բացայայտ դիտաւորութեամբ: Մարդը, որին Աստուած ստեղծել է իր պատկերով ու էութեամբ, այդ մարդն ահա, իր մեղքով, իր սխալմունքով, ընչաքաղցութեամբ, զգացականը, մարմնականը գերադասելով իմացականից, բանականից, շեղուել է ճիշտ ճանապարհից եւ պէտք է վերըստին գտնի իր սահմանը, գտնի ինքն իրեն՝ ամենակատարեալի օրինակով...: Այս է ամենաէականը՝ ինչպէս նկատեցինք այլ առիթներով:

Ծառս անբարձուղէշ, ստուարաստեղն,
 Տերեւալից՝ ունայն ի պտղոց,
 Նմանակից յաւէտ հարազատ այնր թգենւոյ,
 Զոր տէրն գոսացոյց.
 Քանզի սաղարթաւք վարսից,
 Այս է՝ արտաքին դիմաւք բարեչութիւն,
 Իբր պսակաւ իմիք պահուծեալ,
 Բացականացն զոս բաղձալի,
 Իսկ եթէ մերձեացի տնկողն խուզել զխնդրելին,
 Գուցէ զքեզ ունայն ի բարեաց
 Եւ զարչելի ի գեղեցկութեանց՝
 Ծաղր տեսողաց եւ նշաւակութիւնք նախատողաց²¹:

Նարեկացու «Մատենան»ը կոչուած էր Զախըախելու հաւատքի քա-
 րացած, միակողմանի, սահմանափակ ըմբռնումը:

18րդ դարի կրօնական նշանաւոր գործիչները՝ Գր. Շիրվանցին,
 Յովհ. Բաղիչեցին, Միս. Սեբաստացին, Պաղտատար Դպիրը, Պետրոս
 Նախիջևանցին, ինչպէս նաեւ Յ. Նալեան, առաւել խորն ու լայն
 հայեացքով են նայում Նարեկացու հաւատաբանութեանը եւ այն
 գնահատում, մեկնաբանում են առաւել նպատակային եւ ազատ դիր-
 քերից: Ուղղափառ թէ կաթողիկ հաւատքի նշանաւոր այդ գործիչները՝
 Նարեկացու հաւատաբանական խնդիրներին նայում են ընդհանուր
 հայութեան շահերից ելնելով: Նարեկացու «Մատենան»ի աստուածա-
 բանական ուսմունքի բարոյական չափերը Հայոց ազգի միասնու-
 թեան, ինքնահաստատման, ինքնաճանաչման գաղափարներին ծա-
 ռայեցնելու միտումով: Նալեանը, որքան էլ որ հետեւողական էր
 ուղղափառ հաւատքի ծառայութեան մէջ եւ Մխիթար Սեբաստացին,
 որքան էլ որ հետեւողական էր կաթողիկական դաւանանքը պաշտպա-
 նելու իր դիրքերի մէջ, այսուամենայնիւ, երկուսն էլ հաւասարաչափ
 ծառայում էին ընդհանուր հայութեան լուսաւորութեան, առաջադի-
 մութեան գործին, եւ Նարեկացու «Մատենան»ը գնահատում են իբրեւ
 եզակի գործ, որպէս սպեղանի տառապեալ հայ ժողովրդի զարաւոր
 վէրքերին: Նալեան այս դիրքերից է քննում, մեկնաբանում «Մա-
 տենան»ի հաւատքի հարցը: Իրական կեանքի, Հայոց աշխարհի «սեւ
 եւ մթին» ամպերը ցրելու, նրա «արեգակնապիտի փառս» վերակեր-
 տելու առաջին նախապայմանը, գործոն միջոցը ըստ Նալեանի, հա-
 ւատքն է, ժողովրդի կրօնական միասնութեան միաբանութեան ապա-
 հովումը: Նալեանին, իբրեւ ԺԸ դարի ազգային եկեղեցական-լուսա-
 սաւորիչ, իբրեւ ժողովրդասէր գործիչ, բնականաբար պէտք է (Հայոց

21. Մատենան Ողբերգութեան, հջ 278 (Թ):

դաւանաբանական պայքարի շրջանում) օտար տիրակալների տընտեսական, քաղաքական ու կրօնական ճնշումների, ազգային ձուլման ահեղ վտանգի պայմաններում վեր բարձրացնէր ու հնչեցնէր քրիստոնէական միասնական հաւատքի գաղափարը, որն այնքան խոր նստուածք ունի Նարեկացու «Մատեան Ողբերգութեան» մէջ: Հոգեւոր գործիչը ծառանում է «Մատեան»ի հիմքային այդ հարցի վրայ եւս. հանգամանօրէն մեկնաբանում, վերլուծում ու զարգացնում հաւատքի վերաբերեալ Նարեկացու անսահմանափակ, բազմակողմանի, լայն ու խոր հայեացքը:

Քանզի արդարեւ, սեռն տեսութիւն,
Եւ կատարեալ իմաստութիւն,
Եւ առ Աստուած ընտանութիւն,
Եւ բարձրելոյն ծանօթութիւն
Հաւատոց մասն երջանիկ եւ ընտրեալ անուն,
Որ յարաձգեալ մնայ անվթար եւ անփակելի՝
Պատուակիրց գոլով սիրոյ եւ յուսոյ²²:

«Իմաստութիւնը կատարեալագոյն, մտերմութիւնը երկնաւորի հետ, ճանաչումն Աստծոյ մասն են հաւատի»: Քրիստոնէական այսօրինակ հասկացութիւնը կարեւոր նախապայման էր ժ դարի Հայոց աւատապետական իշխանութիւնների ամրապնդման, պետական ներքին ուժերի հզօրացման, օտար ոտնձգութիւնների դէմ դասային բոլոր խաւերի միասնութիւնն ու համերաշխութիւնը, երկրի անվտանգութիւնն ապահովելու համար: Յայտնի է, որ Նարեկացին այդ շրջանում մաքառում էր նաեւ թոնդրակեան աղանդի դէմ: Այս հարցին եւս առաջին անգամ անդրադառնում է Յակոբ Նալեան... «Ով հաւատում է, նրան հնարաւոր է ամէն բան»: Նարեկացու այս հայեացքը մի նոր ուժով բարձրացւում է ժԼ դարում: Նոյն խնդիրները, նոր կերպարանքով, ծառանում են ժԼ դարի պետականագուրկ հայ ժողովուրդի առջեւ եւ նրա առաջադէմ գործիչները կենտրոնական, միասնական եկեղեցու շուրջը համախմբելու մէջ էին տեսնում յոյսի կենսատու ճառագայթները. «Քանզի հաւատ քո կեցուցին զքեզ»:

«Ես հաւատքի չէնք պիտի կառուցեմ» - Նարեկացու հաւատքի չէնքը պէտք է նեցուկ դառնար Հայոց վերանորոգութեան շարժման: ԺԼ դարի մեկնաբանը բացում է Նարեկացու հաւատքի չէնքի դռները, մատնացոյց անում նրա ներքին կապն ու առընչութիւնները ժամանակակից իրողութիւնների հետ: «Հաւատքն սեռն է եւ պարզ ու վճիռ տեսութիւն՝ աներեւոյթից», - գրում է Նալեան, - այն երեւու-

22. Մատեան Ողբերգութեան, էջ 283 (Ժ):

թականացնում է Նարեկացին: Մեկնաբանը խորն է ըմբռնում «անբեռնոյթ հաւատքի» տեսութիւնը... «Հաւատն բարեաց ծնունդ է», - նկատում է Նալեանը, - «թողութիւն մեղաց», «փրկիչ կործանողի», «կանգնեցնող գալարողի»... «Զի ամենայն ինչ հնարաւոր է այնմ, որ հաւատայն»: Նարեկացու թեւաւոր այս խօսքի ընդերքից Նալեանը դուրս է քաշում բանական հատիկը... հաւատքը անբեռնոյթ այդ սեռը երեսութեամբ, տեսակաւորում է բարի գործով. «Հաւատն տեսակաւորեալ բարի գործովը, իսկ կատարեալ իմաստասիրութիւնն քրիստոնէական է»:²³ Հաւատը գործն է մեծամեծ, սէրն է համայնապարփակ, իսկ «սէրն կեանք եւ տեսակ առաքինութեանց, - զարգացնում է Նալեանը, - նախ զի նովաւ կատարին առաքինութիւնք, որպէս ջերմութեամբ արեգական հասունանան պտուղքն, ... զի ամենայն առաքինութիւնք շարժին առ վախճանն սիրոյն եւ սէրն միայն զբարին ունի վախճան» գրում է Նալեանը:

Ուրեմն հաւատը սէրն է, բարի գործով արտայայտուած, երբ կայ գործ, կայ եւ սէր, կայ եւ հաւատ. «Զի եթէ սէրն ո՛չ է երբեք ի դադարել, այլ գործ է մեծապէս եւ թէ դադարի ի գործելոյն ո՛չ է սէր՝ որպէս հուրն շրջեալ ածուխ ասի եւ ո՛չ հուր»: Այս է Նարեկացու հաւատքի բանական, իմացական խորին խորհուրդը, որ առաջինը եւ այնքան յստակօրէն մեկնաբանում է Նալեանը: Երկնային փառքի եւ երկրային «սեւ ու մթին» իրականութեան միջեւ եղած սուր հակասութիւնները, հնարաւոր է վերացնել հաւատով, գործով բարեաց: Հաւատը համայնապարփակ հասկացութիւն է Նարեկացու մօտ. այդպէս է հասկանում Նալեանը: «Հաւատն հիմն է յուսոյ», - մեկնաբանում է Նալեան: ԺԸ դարի վերանորոգողող հոգեւոր երգերում հաւատքի նարեկացիական այս գաղափարն է իշխում: Ո՛վ յուսահատուի նա կը կորցնի իր ոտքի տակի հողը, փրկութեան յոյսը, կը կորցնի գալիքը, ապագան: Հաւատը մարդուն մօտեցնում է Ամենակատարեալին. հաւատը՝ յոյս է, որ մղում է մարդուն կատարելութեան... Նարեկացու մօտ հենց այս կէտից է սկիզբ առնում ու զարգանում աստուածանմանութեան խնդիրը: Նալեան հանգամանօրէն մեկնաբանում է «Մատեան Ողբերգութեան»ի հիմքային այս հարցը եւս: Այս նոյն գաղափարն է իշխում Հայոց հոգեւոր դասական բանաստեղծութեան մէջ միջին եւ նոր դարերում:

Նարեկացիի մարդու վերափոխութեան, նրա փրկութեան ուղիներն է նշում՝ Ամենակատարեալի՝ Աստծոյ, աստուածացած մարդու՝ Քրիստոսի, մարգարէների օրինակով... Հետեւաբար, Նարեկացու «Մատեան»ը ամբողջութեամբ Հայոց միջին դարերի վերածննդի գրականութեան խոշոր արտայայտութիւնն է եւ կրում է հնի ղէմ պայ-

23. ՅԱԿՈԲ ՆԱԼԵԱՆ, Գիրք մեկնութեան աղօթից..., էջ 13-14:

քարի նոր դրօշ...: Եթէ Նարեկացու մօտ կայ միստիցիզմ, ապա դա քրիստոնէական հաւատքի նկատմամբ նրա ունեցած նոր անսահմանափակ ըմբռնումն է, հաւատքը լայն առումով, ինչպէս բացատրում է Նալեան, հաւատն առ Աստուած, հաւատն առ ընկերը, մերձաւորը, մարդը, հաւատը տեսակաւորեալ գործով քարեաց: Նարեկացու «Մատեան»ի խրատքը, «յանդիմանանքն», «ինքնադատանքն» ու «եղբայրականքը», ըստ Նալեանի, Նարեկացու հանճարի, ներհեղական շնորհի, նրա աստուածային ներշնչանքի զլիւսաւոր յարուցիչներն են: Այս համոզմունքով է Նալեան մեկնաբանում «Մատեան»ի կրօնական, աստուածաբանական, փիլիսոփայական, պատմական, գրական, զիցաբանական նիւթերը՝ ներդաշնակելով ԺԸ դարի Հայոց վերանորոգուող կեանքի պահանջներին: Նալեանի մօտ քարացած, կաշկանդիչ օրէնքներ, կաղապարներ ու սահմաններ գոյութիւն չունեն: Բացատրուելիք կրօնական եւ աշխարհային նիւթերը արհեստականօրէն, բռնի կերպով չեն անջատուում կամ միացուում, այլ երկուստեք ներկայացուում են անհրաժեշտաբար, միաձոյլ, նպատակադիր եղանակով: Բռն կրօնական, աստուածաշնչային հարցերի մեկնաբանութիւններին յաճախ յաջորդում են մարդկայինը, հասարակականը, իրականը, առարկայականը, գիտականը, բարոյական բնոյթի քաղաածքներն ու մեկնութիւնները, բացատրութիւնները: Դժբախտաբար նիւթի չըջանակաները թոյլ չեն տալիս լայնօրէն բացելու այս հարցադրման փակագծերը: Յիշենք մի քանի օրինակ միայն մասնակի գաղափար տալու Նալեանի մեկնութեան ոճի մասին: «Մատեան Ողբերգութեան» 2 զլխի՝

Իսկ արդ, զի՞նչ բարւօք գոյ առ այս,
Եւ կամ ո՞ր օգուտ ինձ առ սոյն՝
Ձայս սահման ընթացից ձայնիս հեծութեան լքանել,
Եւ ոչ զամբարեալ շարաւ մահացու վիրիս
Պարանաւ բանիս արտաքս հերքել
Եւ կամ զծանրութիւն սրտիս մթերեալ ցաւոյս հոգեկան խիթոյս
Իբր տաղտկացուցանողական հնարաւորութեամբ,
Մատնամուկս զգուանաւք փսխել²⁴:

Այս տողերի բռն իմաստը պատշաճօրէն մեկնաբանելուց յետոյ (թէ ինչ չա՜հ եւ օգուտ ողբ ու հեծեծանքից, որ վհատուեմ եւ դուրս չթափեմ մահացու վէրքիս թարախը եւ այլն), Նալեանը դարձեալ դիմում է Դ. Անյաղթին. «Մինչեւ խոտանն ո՛չ արտաքսեսցի, օգտակարն ո՛չ ներս մտանէ, որպէս ասէ Դաւիթ փիլիսոփայն... նախ զխոտանն ի բաց ձգէ

24. Մատեան Ողբերգութեան, էջ 266 (2):

եւ ապա զիւրն օրինադրէ, որպէսզի շահաւէտն եւ օգտակարն ամենեցունց յայտնի լիցի՝ այսպէս բժիշկըն նախ դապականեալ հիւթն արտաբերել տան եւ մաղձն փոխել...»²⁵։ «Մատեան»ի 55րդ գլխի վերջին հատուածի՝ «Քանզի կամելով ուժգինաւ ընթանալ՝ ընկլայ սաստկապէս» տողի բուն մեկնութիւնը տալուց յետոյ, Նալեանը գրում է. «Այսինքն, կամելով ի խորս իմաստութեան ուժգինաւ ընթանալ, ընկլայ եւ զլորեցայ սաստկապէս. եւ այս յայնժամ լինի, յորժամ ոք ի փոքր աստիճանէ իմաստութեան ոչ քայլափոխելով՝ կամիցի ի գլուխն ելանել, ընդդէմ որոց ասէ Դաւիթ փիլիսոփայն Սահմանաց ԺԴ գլուխ (պէտք է լինի ԺՁ գլուխ) թէ ո՛չ է պարտ ամենեւին ի նիւթականացս ամենեւեմը յաննիւթականս մատչել, ապա թէ ոչ զնմանս կրեմք այնոցիկ, որք բազում ժամանակս յաղջամղջին տեղունջ կացեալ, այն ինչ ինչ առ արեգակն հայել ձեռնարկեն, որք նոյնժամայն կուրանան, զորս առարկելով քերթութիւնն վասն Խստոսի եւ Եփրատոսի, որք զՍօսայ լեռոն ի վերայ Ոլոմպիոսի յօժարեցան դնել, զի երկինն ձեմարան եղիցի. որ նշանակէ թէ առանց ուսումնականին, այսինքն յամենեւին ի նիւթականէն առ յամենեւին աննիւթականս ձեռնարկեցին»²⁶։ Ընչտ է Դ. Անյաղթից մէջբերուած լրացումը, բայց որքան կարեւոր է հենց այն հանգամանքը, որ Նալեան իմացականական ուղիղ գիծ է ստեղծում Դ. Անյաղթի եւ Նարեկացու միջեւ, որ առհասարակ իր մեկնութիւնները հիմնաւորում է ճշմարիտ փիլիսոփայութեան եւ գիտութեան նշանաւոր գործչի երկերից համապատասխան քաղուածքները բերելով։ Նալեան անվերապահօրէն ընդունում է Դ. Անյաղթի այն հայեացքը թէ չի կարելի նիւթականից անցնել ամբողջութեամբ աննիւթին։ Այսինքն չի կարելի առանց մաթեմատիկայի բնագիտութիւնից բարձրանալ դէպի աստուածաբանութիւն։ Նալեան Նարեկացու նոյն տողի բացատրութիւնը լրացնում է նաեւ յիշելով կրիայի մասին ժողովրդական յայտնի զրոյցը։ Կրիան երկու ամիս շարունակ չարչարում է ծառը բարձրանալու համար եւ ընթացքի ժամանակ զլորւում, վայր է ընկնում. «անիծեալ փութութիւն», – դժգոհում է կրիան իր շտապողականութեան համար։ ԻԱ գլխի «Եւ զիւրդ ասացից անձին իմոյ մարդ» տողը, Նալեան սեղմ, ճիշտ բացատրելուց յետոյ («Այսինքն զիւրդ զանձն իմ մարդ ասացից, որ տմարդի եւ ասելոյախտ եմ առ բարերար»), – անում է նաեւ մի նոր ընդհանրացում, որ բնաւ անտեղի չէ. «զի ճշմարիտ գերախոսիս բարեկամին ճանաչէ»²⁷, – որով առաւել քան խորացնում է Նարեկացու տողի մեկնութիւնը եւ ապա նոյն գաղափարը հաստատում է ընթերցողի մէջ Պղա-

25. Յ. ՆԱԼԵԱՆ, Գիրք մեկնութեան աղօթից..., էջ 441:

26. Անդ, էջ 411:

27. Անդ, էջ 148-149:

տոնի եւ Արիստոտէլի կեանքի հետ կապուած մի կենդանի օրինակով: «Եւ որպէս կոչեցայց տեսողական» եւ այլն տողի մեկնարանութիւնից յետոյ, («Այսինքն, որպէս կոչեցայց մտաւոր եւ իմացական, որ ո՛չ ունիմ զլոյս մտաւ հայիլ ի սքանչելիս օրինաց քոց»), Նալեանը յիշում է Եղիշէ պատմագրի համապատասխան խօսքը՝ «Զի լաւ է կոյր աչօք, քան կոյր մտօք եւ լաւ է գթել ոտամբ, քան թէ գթել ունկամբ, – ասէ Եղիշէ վարդապետն»²⁸: «Մատեան»ի Իթ՝ գլխի այն տողը, թէ՛ «Ով ոք կատարեաց չարիս եւ զինքն ո՛չ նզովեաց», Նալեանը բացատրում է թէ՛ նզովելը այստեղ կրօնական հասկացողութեան հետ կապ չունի. «Նզովելն է բաժանել ի հազորդակցութեան եկեղեցւոյ եւ ի խորհրդոց նորա», իսկ աստ, – շարունակում է մեկնիչը, – նզովել զինքն նշանակում է «նեղապէս առեալ է բաժանել զինքն յինքնէն ըսպանմամբ», եւ ապա մէջ է բերում դարձեալ Դ. Անյաղթի «Մահման»ի Զրդ գլխի այն պարբերութիւնը, որ իրապէս լրացնում, լուսարանում է Նարեկացու տողի միտքը: Ի վերջոյ Նալեանը այն վերջնական եզրակացութեանն է յանգում, թէ նզովին Նարեկացու մօտ ինքն իրեն անիծելն է, ինքնամտրակումը, ինքնածեծումը, ինքնախարազանումը. «Բայց աստ նզովելն է զինքն անիծաբանել. այսպէս ասի թէ գայլն մինչ վաստակեալ ի ճանապարհին յոգնի եւ ոչ կարէ ընթանալ, սկսանի զոտս իւր խածատել զի ժրացուցէ»²⁹: Նալեանն իր մեկնութիւններով, առաջին անգամ բացայայտում է Նարեկացու «Մատեան»ի պատմական աղբիւրները. ՄԶ գլխի «կայսր ոգեկործան» բառերի բացատրութիւնը տալիս է լիովին պարմական փաստերի հիման վրայ: Ըստ Նալեանի Նարեկացին ի նկատի է ունեցել՝ «Դեկոս, Դիոկղետիանոս, Մաքսիմիանոս, Կոստանդինոս արիոսկանն, Յուլիանոս ուրացող, Վաղէս... որք ոչ միայն իւրեանց կորստեանն, այլեւ բազմաց կորստեանն պատճառք եղեն. զայսպիսեաց ասէ Եղիշէ պատմագիրն, թէ թագաւոր անիրաւ ո՛չ միայն զւր համարն տացէ, այլեւ որոց պատճառ եղեւ կորստեան: Իկ այլաբանութօրէն «կայսր ոգեկործան» է սատանայ»: Նալեանը պատմական, իրական փաստերով է բացատրում նաեւ «Իշխան տիրադաւ», «Ղատաւոր ակնառու» եւ այլ բառերի կապակցութիւնները: «Իշխան տիրադաւ, – գրում է Նալեանը, – այսինքն իշխան տիրանենդ, այսպիսիք էին իշխանքն Հայոց, որ զսուրբ Տրդատիոս մահադեօք սպանին եւ զԱրտեւան արքայն՝ Պարսից թագաւորին մատնեցին ի ժամանակ մեծին սրբոյն Իսահակայ»։ «Դատաւոր ակնառու, ըստ այնմ մինչեւ յե՞րբ դատէք անիրաւութեամբ եւ ակն առնուք մեղաւորաց...»³⁰:

28. Անդ, էջ 149:

29. Անդ, էջ 216:

30. Անդ, էջ 421:

Հենց այստեղ մենք ցանկանում ենք անդրադառնալ հայագէտ-նարեկացիազէտ Վազգէն Գէորգեանի «Մատեան Ողբերգութեան» պոէմի աշխարհաբար թարգմանութեանը կից «Յետադարձ հայեացք» խորագրով ուսումնասիրութեան մէջ տեղ գտած մի հարցի՝ նախապէս մեր երախտագիտական խօսքը ուղղելով մեծարգոյ թարգմանչին, նրա կատարած տիտանական աշխատանքի համար: «Մատեան Ողբերգութեան» երկի նախորդ մեկնիչներն ու թարգմանիչները, - գրում է նա, - լինելով բարձրաստիճան հոգեւորականներ, Նարեկացու ստեղծագործութեանը նայել են սոսկ այդ հայեացքով: «Ողբերգութեան մատեան»ը դիտել են միայն որպէս աղօթագիրք եւ անգամ վերանուանել այն՝ «Նարեկ աղօթից» «Աղօթամատեան» եւ այլն... Գ. Աւետիքեանի մօտ օրինակ, - շարունակում է Վ. Գէորգեանը, - «գրեթէ չկայ մի արտայայտութիւն, որին անվերապահօրէն վերագրած, պատուաստած չլինի կրօնական իմաստ, կապած չլինի այն դաւանաբանական որեւէ հասկացութեան հետ կամ դիտած չլինի որպէս հոգեւոր այս կամ այն դոգմայի խորհրդանիշ»³¹: Մենք չենք կարող մտածել, թէ մեծարգոյ թարգմանչին անծանօթ է Նալեանի մեկնութիւնը. անկախ այդ բանից, մեր կարծիքով բոլոր թարգմանիչներին ու մեկնիչներին հասցէագրուած այդ մեղադրանքը խիստ է, եւ անշուշտ ժամանակն է կաշկանդել այդ տողերի հեղինակին...

Նալեանի եւ Աւետիքեանի կողմից կրօնական նիւթի վրայ չեղող դնելու հարցը այդպիսի եզրակացութեան պէտք չէ յանգեցնէր... Այո, Նալեան հաւատքի դիրքերից է փարուում Նարեկացուն. ինչպէս նկատեցինք արդէն, դա պատճառաբանում է պատմական հանգամանքներով. Նալեան նոյն դիտաւորութեամբ է փարուում նաեւ յունահռոմէական գրականութեան... Հաւատքի հարցն է այն հանգուցակէտը, որտեղից Նալեանը կամուրջ է նետում Նարեկացու եւ ԺԼ դարի միջեւ: Նալեանը չի թաքցնում իր նկատառումները, կրկնում ենք, այդ էր պահանջում դարը, ժամանակը, «Ծծանի՛ք եւ զայս, ո՛վ ջերմեռանդ ընթերցողք, զի ի մէջ գրքոյս՝ մեք եւ բազում վկայութիւն ի Յունաց եւ ի Լատինացւոց գրեանց ընդ պատեհին առեալ եմք, մի՛ ոք ի տեսանելն խրտիցի, - բացատրում է Նալեան, - զի զոմանս առեալ եմք ընդունելով, որք ոչ են ընդդէմ հաւատոյ եւ բարի գործոց եւ զոմանս իբրեւ ի հաստատութիւն ճշմարիտ դաւանութեան Հայաստանեայց Եկեղեցւոյ, որպէսզի եւ ի նոցայցն գրեամբք հաստատեսցի ճշմարտութիւն սրբոյ եկեղեցւոյս Հայոց»³²: Այս միտքը Նալեան կրկնում է նաեւ «Բանալի այբբենական ցանկի գրքոյս» խօսքում

31. Վ. Գէորգեան, «Մատեան Ողբերգութեան», աշխարհաբար թարգմանութիւն, «Յետադարձ հայեացք», Երեւան, 1979, էջ 602:

32. Յ. ՆԱԼԵԱՆ, Գիրք մեկնութեան աղօթից, էջ 16:

եւ «Ազդեցութիւն առ ընթերցողս» խորագիրը կրող վերջաբանում. «Ծանի՛ր եւ զայս, զի ի մէջ ամենապտուղ բուրաստանիս, մեք եւ ի կռապաշտ փիլիսոփայից (որպէս ի Պլատոնէ, յԱրիստոտէլէ եւ այլոց) վկայութիւն առաք՝ զոմանս վասն եղծելոյ, եւ զոմանս առ ի վկայութիւն ճշմարտութեան մերոյ կարծեաց՝ թէ բնականաց եւ թէ գերբնականաց»³³։ Բացի դրանից այդ հանգամանքը պէտք է բացատրել ոչ թէ նրանով, որ նրանք բարձրաստիճան հոգեւորականներ են, այլ նրանով, որ մեկնաբանուող երկը, անկախ նրանից թէ այն, «Մատեան Ողբերգութեան» կոչել, թէ «Աղօթագիրք»՝ կրօնական ստեղծագործութիւն է՝ լայն առումով։ Եթէ ժ դարի հանճարեղ բանաստեղծ վարդապետը ի խորոց սրտէ խօսում է Աստծու հետ, նրան է նուիրում «աստուածաշունչ» իր երկը՝ իբրեւ «դեղ կենաց» եւ յաճախ այն կոչում է նաեւ աղօթքի կամ աղօթքի ձեւով ներկայացուած մի մատեան, «ի դէմս աղօթից այսու մատենիւ...» եւ որ դեռ բանասիրութեան համար էլ վերջնականապէս պարզուած չէ խորագրի հարցը, ապա ԺԸ դարի մեկնիչը իրաւունք ունէր «Գիրք աղօթից» կամ «Աղօթամատեան» կոչել այն... բացի դրանից։ Մի կողմ թողնելով դաւանաբանական հարցերում Նալեանի եւ Աւետիքեանի տարահայեացութիւնը (այդ էր թելադրում ժամանակը), նրանց կրօնական նշանաւոր գործիչներ, «աստուածաբաններ լինելու հանգամանքը», ո՛չ թէ վնասել, այլ՝ ընդհակառակը, օգնել է, որպէսզի ճիշտ մեկնաբանուեն ժ դարի հանճարեղ կուսակրօն բանաստեղծի մտքերը։ Ինչ վերաբերում է մեկնաբանութիւնների մէջ նրանց միակողմանի լինելուն, ապա, զա բնաւ ընդունելի չէ։ Դրանում համոզում են, թէկուզ վերեւում մէջ բերուած օրինակները... Աւելին եթէ Նալեանը «Մատեան»ը զնահատում է իբրեւ աստուածային եւ մարդկային իրողութիւնների գիրք, եթէ նա ուղիղ գիծ է տեսնում «Մատեան»ի եւ Դ. Անյաղթի «Սահմանք»ի միջեւ, ապա նշանակում է, որ նրա մտածողութիւնը սահմանափակ չէ։ Ժ-ի դարերի նշանաւոր ներկայացուցիչներից եւ ոչ մէկը չի ժխտում «Մատեան»ի աստուածաշնչային հիմքի գոյութեան փաստը։ Դրանով դոյզն չի իջնում «Մատեան»ի արժէքը։ Բայց դրա հետ միասին կայ նաեւ գիտութեան, փիլիսոփայութեան հիմքերի առկայութիւնը։ Պէտք չէ մոռանալ նաեւ, որ Նալեանը եւ Աւետիքեանը «Նարեկ»ը մեկնելիս, բնականաբար, շեշտը դնում, ծանրանում են յատկապէս մեկնաբանութեան կարօտ, բարդ, անծանօթ, դժուար իմանալի արտայայտութիւնների վրայ, որոնք գերազանցապէս աստուածաբանական իմաստ կամ ծագում ունեն, աւրնչւում են Աստուածաշնչի, աւետարանական նիւթի հետ, սրբերի, մարգարէների, առաքեալների, հրեշտակների, Քրիստոսի, Մարիամի կեանքի, վարքի, գործի հետ։ Բայց դրանց

33. Անդ, էջ 1052։

հետ միասին, կան նաեւ հայ եւ օտար իմաստասէրներ, գիտուններ: Եթէ Նալեանն իր մեկնութիւնը ծանրաբեռել է «յայլ խօսս վարդապետական կամ բանասիրական», ապա ինչպէս նկատեցինք, հենց դրանով նա հետամուտ է եղել Նարեկացու փրկիսոփայական, դադափարական մտքի սլացումների անհուն ընթացքին: Սակայն Նալեանը կանգ չի առել այդ կէտում, ինչպէս տեսանք եւ դեռ կը տեսնենք: Անմիջական ու ոչ անմիջական եղանակով Աստուածաշնչի եւ իրական կեանքի, աստուածային եւ մարդկային իրողութիւնների կապն ու յարաբերութիւնները ելակէտ ունենալով՝ Նալեան գծել է այն ուղիները, որոնք միացնում են Նարեկացու կրօնական եւ աշխարհային, երկնային եւ երկրային ըմբռնումները: Եթէ Նալեանը Նարեկացուն անուանում է երկրորդ Պրոմիթեոս, որ աստուածային կրակը նուիրում է մարդուն, ապա դա նշանակում է, որ Նալեանը ըմբռնել է Նարեկացու «Մատեան»ի խորին խորհուրդը՝ լոյսը, ազատութիւնը, կեանքի կրակը բոլոր բանականներին վերադարձնելու նրա պատգամի էութիւնը³⁴: Եթէ Նալեանը Նարեկացուն նմանեցնում է մերթ Դեմոկրիտին, որ ծիծաղեցնում է, մերթ Հերակլիտին, որ լացացնում է... ապա դա նշանակում է, որ Նալեանը խորապէս գնահատում է Նարեկացու արուեստի իրական ներգործութիւնը, տեսնում է նրա գեղազիտութեան կենարար ցոլքի առկայցումները...: Նարեկացու «Մատեան»ն ամբողջութեամբ Նալեանը դիտում է իբրեւ աննախատիպ երեւոյթ, բանաստեղծի «բնականի», «կրօնականի», «ներհեղականի» մի անօրինակ միութիւն, մի կուռ, անձեռակերտ հիւսուածք: Արդ, - գրում է Նալեան, - եթէ իմաստութիւն սրբոյն Գրիգորի միայն բնական եւ կրթական իցէր՝ եւ ո՛չ եւս ներհեղական, թէեւս կարէին ոմանք նմանեցուցանել բանից սորա զբանս իւրեանց աղօթից. այլ մինչ չկարացին քաղցրութեան սորին իմաստութեան հաւասարել, ցուցին զսորայն գոլ ներհեղական... Ի բազմաց եւս տեսեալ եմք յարմարեալ զաղօթս, այլ ո՛չ քաղցրութիւն բանից Սրբոյն Գրիգորի...: Բազումք կամեցան իբրեւ զՓայտախնոս նմանեցուցանել զաղօթական բանս եւ զիմաստութիւն իւրեանց սրբոյն Գրիգորի եւ մնացին յետնեալ, որոնց բանքն համեմատեալք բանից նորա, էին իբրեւ զԿիպրոսի անդամանդան, առ իսկական անդամանդան Հնդկաց»³⁵: Այսպէս է գնահատում Նալեանը Նարեկացու հանճարը՝ բնականի, ստացականի հետ միասին նրա աստուածային ներշնչանքի յատուկ ոյժն է ներհեղական, ինքնատուր, ինքնարուիս շնորհը, բանաստեղծական բացառիկ քանքարը, որ ունի նա եւ ոչ այլ ոք...: Ըստ Նալեանի ո՛չ ոք չունի Նարեկացու արուեստի կենսաճանաչողական հզօրութիւնը: Ո՛չ ոք չգրտ-

34. Անդ, էջ 11:

35. Անդ, էջ 6-7:

նուեց Նարեկացու բանաստեղծական ճաշակին ու ոճին արժանահասակաբար: Նրա եսի, հոգու մէջ արձագանգ ստացաւ տիեզերքը, երկնային եւ երկրային իրողութիւնները՝ միաժամանակ. Նալեան զգում է Նարեկացու ողբի ընդհանրացուած մագնիսական ոյժը. «որ իրբւ զանմեղ տատրակ զմահ մեղաց այլոց սգալով ողբայր եւ եղանակ լալոյ ուսուցանէր՝ թէ զկորուսեալ բարին որպէ՛ս գտանելի է եւ զչունեցեալն որպէ՛ս ստանալի է... Եւ ես ասեմ, առանց աղօթական եւ զղջական բանից սրբոյն Գրիգորի՝ ցամաք եմ աղբիւրք արտասուաց»³⁶: Այսպէս է գնահատում Նալեանը Նարեկացու ողբի բնոյթը, նպատակը, նրա փիլիսոփայութեան ներգործութեան չափը, առարկայական աշխարհի, արտացոլման, մարդու իմացական եւ զգայական յատկութիւնների արտաբերման խորութիւնը:

Ինչպէս արդէն գրել ենք Պաղտատար Դպրի ողբական բանաստեղծութեան առնչութեամբ (տե՛ս «Բաղմավէպ», 1986, էջ 202-235), Նարեկացին ինքն է բնորոշում, բացատրում իր ողբի, իմաստն ու էութիւնը, նպատակն ու գերը: Նալեան գեղագէտը խորապէս հասկանում է նրան: Նարեկացու ողբը յորդորում է բանական արարածին՝ իմանալու թէ ի՛նչպէս գտնել կորցրածը, ի՛նչպէս ետ ստանալ, ի՛նչպէս ձեռք բերել չունեցածը, «Քանզի ի՛նչ շահ եւ ի՛նչ նպատակ...», - գրում է Նարեկացին, - եթէ ողբը դուրս չիմպի ծանրութիւնը վիշտ ու ցաւերիս ...»: Նարեկացին գեղագիտորէն սահմանում է ողբի իմացական նշանակութիւնը: Յիրաւի, ԺԸ դարի ողբի եւ սթափման բանաստեղծութեանը առաւելապէս բնորոշ է հենց այդ գիծը...

Իսկ արդ, զի՞նչ բարւօք դոյ առ այս,
Եւ կամ ո՞ր օգուտ ինձ առ սոյն՝
Ձայս սահման ընթացից ձայնիս հեծութեան լքանել,
Եւ ոչ զամբարեալ շարաւ մահացու վիրիս
Խարանաւ բանիս արտաքս հերբել (Բան Զ):

Նալեանը ե՛ւ իր ներածութեան, ե՛ւ մեկնաբանութեան մէջ բացորոշում է Նարեկացու ողբի կենսական շէշտը, մարդու ցաւը պատմելու, վէրքը բուժելու, նրան բարոյապէս վերակերտելու, վերաստեղծելու, նրան ի նորոյ նորոգելու նպատակը. «Ճայցէ սիրտ նոր եւ հոգի նոր նորոգեացի փորի իմում», - մեկնաբանում է Նալեանը...: Սուգը, ողբը, զղջումը մեծ նշան է «ողորմութեան եւ կատարելութեան»:

Նալեանն իբրեւ նարեկացիագէտ ազատ, անկաշկանդ հայեացքով ընդգրկում է Նարեկացու «Մատեան»ի արուեստի անհուն տարածքը եւ գնահատում նրա փիլիսոփայութիւնը, նրա աստուածաբանական

կենսափիլիսոփայութիւնը՝ նրա աղօթք-բանաստեղծութիւնը դարերի պատմութեան մէջ. «Իմաստասիրութիւն սրբոյս Գրիգորի էր արդարեւ ճրագ յաշտանակի. ճախարակ նորաքայլից, - գրում է Նալեան, - ցուպ մեղաց ծերացելոց, գաւազան դիւահալածից, դաստիարակ ապաշխարողաց, մանաւանդ տեսականաց, հայելի դարատ իւրեանց նշմարողաց, օշինդր զղջացելոց, յուսադրութիւն մեղաւորաց... խարտոց մաքրիչ ժանգից մոլութեանց, կամնասայլ թօթափիչ ցորենոյ կեղեւանց, զեղհատիկ հալիչ՝ արտաքսիչ մաղձից դառնութեանց... քնար տասնադի դիւաց հալածման, ափաղաղ ձայնատու առիւծոյ սարսման, մագնիս երկաթափարշ աստուածայնոյ գրութեան... կաթիլ վիմախալ սրտի խտութեան, ձայնատու քարքառ ապաշխարութեան, հաստատուն պահօղ զառաքինեանց կեան, ներկայ խօթութեան զեղ ապաքինման, յապագայից զգոյշ աչք ի բաց պահապան»³⁷: Ուրեմն Նարեկացու «Մատեան»ը հայելի է, ուր ամէն մի մարդ կարող է տեսել իր արատները, մի երկ, որ զգաստացնում, սթափեցնում, զգուշացնում է բնական արարածներին ճիշտ հասկանալու կեանքը, երկնային եւ երկրային աշխարհներն իրենց միասնութեան մէջ, իրենց հակասութիւններով եւ ներդաշնակութիւններով... միաժամանակ հայ հանճարը զգուշացնում է բնական գոյին գալիքը, ապագայի համար, զինում է նրան անցեալը ճիշտ գնահատելու, ներկան եւ գալիքը ճիշտ հասկանալու իմացականութեամբ: «Ներկայ խօթութեան զեղ ապաքինման, յապագայից զգոյշ աչք ի բաց պահապան»: Այսպէս եւ Նարեկացուն հասկանում ժԼ դարի մեկնաբանը եւ ճիշտ է հասկանում³⁸: Բարոյագիտական, մարդասիրական նարեկեան այս համայնապարփակ փիլիսոփայութիւնը, ըստ Նալեանի, բանաստեղծը արտաբերում է ողբով, զղջմամբ, ապաշխարանքով, աղերսանքով եւ քննադատանքով, խրատանքով՝ զգացմունքների, տրամադրութիւնների բանաստեղծական գունագեղ, անօրինակ պատկերների հիւսուածքով. «զմահ մեղաց այլոց» իր անձի, իր եսի միջոցով արտաբերելով: Նալեանը նկատում եւ չեչտում է Նարեկացու արուեստի նորարական այս գիծը, ըստ նրա «Նարեկ»ը հոգեւոր բանաստեղծութեան աղօթքի այն բարձունքն է, որին նուաճել է Նարեկացին եւ ոչ ոք նրանից առաջ եւ յետոյ:

Նարեկացու «Մատեան»ի նալեանական մեկնութիւնը տարբերում է մնացած մեկնաբանութիւններից ու լուծմունքներից նաեւ իր բանաստեղծական հատուածներով: Նալեան իր մեկնութիւնը, ինչպէս ո՛չ ոք, ուղեկցում է քնարական բազմատեսակ կտորներով, որոշ հատուածներ, մեկնում է լրիւ կամ պակաս չափով՝ սոսկ բանաստեղ-

37. Անդ, էջ 11:

38. Անդ, էջ 7:

ծովթեամբ, իսկ 80րդ գլուխը համառոտաբար մեկնում է չափաբերուած: Ուրեմն ինչ-ինչ չափով Նալեան Նարեկացու նաեւ բանաստեղծմեկնաբանն է: «Մատեան»ի մասամբ նաեւ ճառերի եւ ներբողների բազմաթիւ կէտերի մեկնութիւնը, վերլուծութիւնը նա առաջ է վարում բազմաստեղծ, բազմաձեւ, քնարական՝ պարզից բարդ, դասականից ժողովրդական բնոյթի տարբեր չափի ու մեծութեան եւ այլ հեղինակների բանաստեղծութիւններով: Ընթերցողը ամէն վայրկեան զգում է թէ ինչպիսի ծանր ու մեծ, անասելի դժուարին ու պատասխանատու գործ է յանձն առել բանաստեղծը: «Մատեան»ի մեկնութեան մէջ սփռուած բանաստեղծութիւնները բաժանում են երեք կարգի: Առաջինը այն բանաստեղծութիւններն են, որոնք մեկնութեան բաղկացուցիչ մասն են կազմում կամ լրացնում՝ եզրափակում, ամբողջացնում են մեկնութիւնը: Երկրորդը՝ բանաստեղծական այն կտորներն են, որոնք մեկնաբանութիւնից յետոյ հեղինակի՝ երգչի խօսքը, վերաբերմունքն են յայտնում՝ ուղղուած Նարեկացուն: Իսկ երրորդը՝ այլ բանաստեղծութիւններից քաղուած կտորներ են, որոնցով լրացւում են «Մատեան»ի այս կամ այն խօսքի բացատրութիւնը: Գեղեցիկ եւ ազդու են յատկապէս սրբերին, մարգարէներին, առաքելներին, Աստուածամօրը նուիրուած մեկնաբանութիւններին կից բանաստեղծական կտորները: Դրանք 18րդ դարի հոգեւոր քնարերգութեան նորատիպ նմոյշներ են՝ յօրինուած խորն ներշնչանքով ու աւիւնով: Նարեկացու Աստուածածնին նուիրուած ընդարձակ ներբողը մեկնաբանող եզրափակիչ բանաստեղծութեան մէջ (Բանք 82) Նալեան արտացոլում է իր ժամանակը, արտայայտում է իր ժողովրդի ակնկալութիւնները, երազում է՝ լոյս գալիք, նոր կեանք, իր տառապեալ ազգի համար: Եթէ դու, դիմում է բանաստեղծը Մարիամին, ականատես ես այս բոլորին՝ ինչ կատարւում է, եթէ դու հոգելից մայրն ես ամէնքի, լսի՛ր դատապարտուած իմ ժողովրդի ձայնը, փրկիր նրան վերահաս աղէտից:

Թէ ի մահ մատնեալս, ո՛վ կենդանի լոյս,
Փրկես որ ես ինձ՝ ապաւէն եւ յոյս,
Թէ գողը հեծութեանս հատցես ի հոգւոյս,
Կամ զաչացըս լաց՝ բերկրութեան ես բոյս,
Թէ ըզխորտակեալս՝ կազդուրեալ հաստես,
Ըզդեղ կենաց գոլը՝ այնու ճշմարտես,
Թէ ի կործանեալ՝ հոգիս ակնածես,
Հոգելի՛ց ես դու եւ ականատես³⁹:

Առաքեալներին, սրբերին, նաճատակներին նուիրուած մեկնողական բանաստեղծութիւններում նոյնչափ խորն են զրոհւորում Նալեանի կրօնա-ազգային յոյզերն ու տրամադրութիւնները: Բանաստեղծ մեկնարանը Նարեկացիական անհամատեղութեան ոգին, քըն-նադատանքը գործադրում է իր դարի, «առիւծ դեւերի» դէմ մաքառելու համար: Հզօր եւ անմարմին սրբերի օրինակներով, (որոնք նահատակուել եւ անմահացել են), Նալեան ոգեկոչում է ժամանակակից սերունդներին՝ գօտեպնդելու մաքառողական պայքարի ելնելու առիւծ դեւերից պաշտպանելու համար:

Դուք որ հըզօրք եւ անմարմինք սրբացօղք,
 Ի ձէնջ գտան յոյժ բազմութիւնք մեղանչօղք,
 Մեք, որ տըկար հոգանիւթեայ ծանրացօղք,
 Ո՞րպէս լինիմք առիւծ դեւին դէմ կացօղք:
 Ընդ ազարեանց ոչ եմք մըտեալ ի հընոց,
 Բայց չուրջ ունիմք վառեալ ի մեզ մեղաց բոց,
 Թօթափեցէք ըզհօւրն ի մերս հոգւոց,
 Յօղեալ ըզչնորհ էին, որ սուրբն է սրբոց...
 Մեք եմք սովեալ ձերումըդ սուրբ գիտութեան,
 Ի անկեալ ի զուր դիւաց եղեալ եմք կոխան,
 Որք մըռնչեն թէ զո՛ ի մէնջ ի կուլ տան,
 Մեզ օգնեցէք տալով ըզլոյս ազատման...⁴⁰:

«Մատեան»ի ութսուներորդ գլուխը, ինչպէս նկատեցինք, Նալեանն ամբողջական մեկնարանում է տաղաչափօրէն: Նարեկացիագէտը այն գնահատում է իրրեւ «բազմադիմի գովասանութիւն եւ աղերս» նուիրուած միայն Աստուածամօրը, որտեղ նա առաւել յստակ բացորոշում է նարեկեան յոյսի խորհուրդը, «որ յուսահատի գփրկութենէ իւրմէ, կորուսանէ զհաւատն, որ է հիմն յուսոյ: Իսկ դիմել սրբոյ Գրիգորի ի բարեխօսութիւն Աստուածածնին, է յայտնի նշան յուսոյ»⁴¹: Այլ ճանապարհ չէր կարող տեսնել իր ժողովրդի ցաւակից գործիչը. այս եղանակով է նա բարձրացնում ազգի մարտական ոգին, ոյժ եւ կարողութիւն ներշնչում. «անկեալ է զուր դիւաց կոխան» իր ժողովրդին: Նալեանը տարակոյս չունի թէ Նարեկացու «Մատեան»ի լատեստական, կենսաշունչ ոգին վճռական դեր պիտի կատարէր հայութեանը անկման եզրից ետ դարձնելու գործում:

Բարձրացի յաւէտ պատիւ քո ինեւ,
 Եւ ցուցցի հանրից փրկութիւնն իմ քեւ,

40. Աճղ, էջ 626:

41. Աճղ, էջ 609:

Եթէ զիս գտցես, ո՛վ դու բարկ արեւ,
 Հանցես ի մեղաց զանկեալս ի ստորեւ...
 Եթէ ըզհարթեալս՝ յոստոց բարովեանց,
 Ոռոգես կաթամբն որ ի քոյդ ըստեանց,
 Սիւն հաստատ կանգնես ներ երկուց անկեանց,
 Երջանիկ դու մայր՝ սիրոյ գթովեանց...
 Թէ ինձ գթասցիս՝ լուծիչդ անիծից,
 Եթէ ըզծփեալս յալեաց արկածից,
 Առ որդիդ հաստես՝ կանգնիչն անկածից,
 Հանգիստ եւ փրկանք՝ դու ես անկարծից...
 Թէ վասն իմ մտցես ի հանդէս մարտի,
 Ի քէն նահանջեալ՝ մահն իմ եւ պարտի,
 Թէ զիս անուշես՝ հոգւովդ հանդարտի,
 Դառնութիւն սրտիս՝ շուտով աւարտի...⁴²

Բանաստեղծութիւնների երկրորդ խումբը, որ զգալի թիւ են կազմում, առաւել արժէքաւոր են: Դրանք բացառապէս վերաբերում են Նարեկացուն եւ «Մատեան»ին: Սրանք երբեմն ուղեկցում կամ եզրափակում են մեկնաբանող գլուխները, երբեմն էլ զրուում են չափաբերուած մեկնութիւններից անմիջապէս յետոյ՝ իբրեւ յատուկ խօսք, ներքող, ուղղուած բանաստեղծ Նարեկացուն կամ գնահատութիւն՝ ներքող «Մատեան Ողբերգութեան» երկին:

ԼԱ գլխի մեկնութիւնը, որ աւարտուում է «Ով անարատ, պարզ հայելի եւ վճիտ» սկսուածքով, Նալեանն աւարտում է այլ հափի հինգ տնանոց մի բանաստեղծութեամբ, ուր յայտնում է իր իղձերն ու ցանկութիւնները սուրբ հերոսներին եւ աղերսում նրանց նպաստ բերել գործին. իր նպատակների կենսագործման ճանապարհին՝ օգնել իրեն:

Ի պատիւ ձեր զայս երգողիս,
 Յակոբ խրղճուկ Պատրիարքիս,
 Ի հանդերձեալն և ի կեանս աստիս,
 Համակ լերո՛ւք սիրով ընդ իս:
 Ի հաճելի կամս Աստուծոյ,
 Եւ մի՛ առ իղձ իմոյս հոգւոյ,
 Նըպաստք լերուք յաջողելոյ,
 Ո՛վ գուարթունք մառանք սիրոյ⁴³:

42. Աճղ, հջ 610-611:

43. Աճղ, հջ 627:

Այս կարգի բանաստեղծություններից մի քանիսը ժողովրդական ստեղծագործության հմայք ունեն։ Նալեանը այսօրինակ փոքրիկ բանաստեղծությունների մի շարքով է աւարտում։ «Գիրք մեկնութեան աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ հրեշտակական վարդապետի» իր վիթխարածաւալ աշխատությունը։ Ժողովրդաշունչ, երբեմն հանելուկատիպ այս բանաստեղծությունների մէջ Նալեանը սիրով ու քնքշութեամբ խօսում է իր կրած դժուարությունների, իր նկատառումների, մտորումների, ցանկությունների մասին, որոնք նա ունեցել է յատկապէս «Մատեան Ողբերգութեան», «յոգնիմանալից շտամարանի» մեկնութեան ժամանակ։

Թէեւ ունիմ զայլ ինչ կարօտ,
Են առ այս գործ կարի աղօտ,
Ջանամ ի ցայգ եւ յառաւօտ,
Հանել եւ զայնս իբր ի յարօտ⁴⁴։

Նալեանը մարգկային ուժերից վեր է համարում Նարեկացուն յաղթահարելը եւ ներումն է խնդրում ընթերցողից թէ՛ «բիւրոց բանից զմինն յայտ արարի»։

Մո'ւտ ի սենեակ սիրոյ սրբոյն Գրիգորի,
Ճաշակեա՛ զիմաստն ըստ քումդ կարի,
Անմեղադի'ր լեր ինձ յորդ սիրահարի,
Որ ի բիւրոց բանից զմինն յայտ արարի⁴⁵։

Նալեանը խորապէս զգում է, որ կատարում է ծանր ու դժուարին, բայց անմեռ մի գործ եւ որ «Նարեկ»ի ոգին յաւիտենական պահապան պիտի լինի իր անուանն ու յիշատակին։

Լե՛ր պահապան
Եւ ինձ պաշտպան,
Մինչ ի տապան,
Դընիլս ի տան։

* * *

Լինեմ զերկայն նուրբ կտաւ,
Զմահն ո՛չ բերեմ ըզմըտաւ,

44. Աճղ, էջ 1053։

45. Աճղ, էջ 7։

Թէ հարկանէ կարկըտաւ,
Քարչէ ի հող զէտ տտաւ:

* * *

Իղճն իմ, որ է վառ,
Լըքանի իսպառ,
Կեանք իմ գերափառ,
Զերկունս ի միտ առ⁴⁶:

* * *

Ի պատկերէդ զանհուն քոյին սուրբ իմաստ,
Յարթուն անուն քոյդ ծառայէն բարեբաստ,
Ծանեայ թէ ես դու խնդրողացն ի պատրաստ,
Տա՛լ զոր խնդրեն թէ առելոց չեն ուրաստ⁴⁷:

Եւ մեկնութիւններից յետոյ, եզրափակիչ բանաստեղծութիւններում, ներբողներում եւ յիշատակագրական բնոյթի չափածոյ երգերում Նալեանը վերստին բարձրացնում է «Մատեն»ի համամարդկային նշանակութիւնը, բնութագրում Նարեկացի մտածողի, փիլիսոփայի, հրեշտակական վարդապետի հանճարը, արժէքաւորում է «Մատեն»ն իբրեւ աստուածաբանական-փիլիսոփայական եզակի երկ, իբրեւ իմացաբանական, բարոյագիտական հանրագիտարան: Այս բանաստեղծութիւններում եւս մի զարմանալի իմացական գիծ է զարգացնում Նալեանը՝ քրիստոնէական հաւատքի, սուրբ Երրորդութեան եւ յունական մատերիալիստ փիլիսոփաների, հերակլեան աշխարհա-
ճանաչողութեան միջեւ:

Երրորդութեան մի տէրութեան,
Փառք եւ պատիւ յաւիտեան,
Որ համայնից տայ զոլ եւ կեան,
Խոստանայ փառք հանգըստեան:

Զեղու շնորհ ծովանըման,
Քան ըզհոսանս Հերակլեան,
Ամէն մէկի տայ ըստ տարփման,
Զէտ հայելոյ ըստ տեսլեան⁴⁸:

46. Անդ, էջ 1053:

47. Անդ:

48. Անդ:

Նալեանը իր բանաստեղծութիւններից մէկում, որ եզրափակում է 73րդ գլխի մեկնութիւնը, ընթերցողին յանձնարարում է ատեան հանել, ժողովի նստել, քննել Նարեկը համոզելու համար, որ աշխարհի բոլոր մեծութիւնները համբանում, խեղճանում են Նարեկացու առաջ՝

Դի՛ր առաջի քոյ զայն ատեան,
Յոր Տէրտուղոսըն քաջաբան,
Եւ Սողոմօն որդի Դաթեան,
Լինին համերք անխօսական:
Անդ Օգոստոս հանրից արքայն,
Լինի աղքատ ւանընչական,
Անդ զառիւծու ուժն ունական,
Է նապաստակ երկշոտական:
Անդ Կրասոս փարթամ արքայն,
Զէտ Սանդիտոռն է մերկական...⁴⁹:

Նալեանի «Մատեան»ի մեկնութեան բանաստեղծական առանձին հատուածները մտել են ձեռագրի աշխարհ, ընդօրինակուել եւ տարածուել նաեւ այդ ճանապարհով. այդպիսիներից է օրինակ «Ահեղ արփւոյն դու շառաւիղդ յարածագ» սքանչելի ներբողը, որով Նալեանը աւարտում է «Մատեան»ի մեկնութեան 81րդ գլուխը: Զեռագրերում այն կրում է «Առ գերագունիցն քան զմեզ անմահից հրեշտակական սիրոյ ներբողական բանք մաղթանաց» խորագիրը⁵⁰:

Բանաստեղծական մեծ թափով է հիւսուած նաեւ Նալեանի մեկնութեան 82րդ գլխին յաջորդող Նարեկացուն եւ «Մատեան»ին նըւիրուած ներբողեանը՝ Ա-ից Ք տողերով:

Աթոռք անեղին, տեղիք հանգստեան,
Բանալիք դրախտին, բենաբան մատեան,
Գետք եղեմային՝ քառավըտակեան,
Դըրունք քաղաքին, սուրբ արքայութեան...
Իսկական բանին մեկնօղք եւ թարգման,
Լուսոյ ազնուին պատկերք բանական,
Խօսնակ գիշերին, զարթուցիչք մարդկան,
Ծաղկունք դրախտին, անմահ կեանք բուրման,
Կառք հըրեղինին, յամէն կոյս տարման,
Հակազէն շարին, դիւին գլխատման,
Զայն տուք տատրակին՝ ձմռան փախուցման...

49. Աճդ, էջ 608:

50. Մատենադարան, ձեռ. թիւ 6690, էջ 12:

Նշանք երկնային, աղեղք հաշտութեան,
 Շուշանք հովտային, ծաղկունք դաշտական...
 Պարսաքարք չարին, գլխոյն ջախջախման,
 Զուր սուրբ աղբերին, զաղտ մեղաց ջնջման...
 Յօղ թեթեւ ամպին, ծաղկանց բուսուցման...⁵¹:

Նալեանը չի բաւարարուում իր մեկնութիւնները լրացնող երգերով, Նարեկացուն եւ «Մատեան»ին նուիրուած զանազանաձեւ, զանազանառոճ իր սեփական բանաստեղծութիւններով: Ինչպէս նկատեցինք, մեկնութիւնների ընթացքում նա համապատասխան քաղուածքներ է անում նաեւ Հայոց անցած դարերի բանաստեղծների՝ Գր. Մազիստրոսի, Ն. Շնորհալու, Ն. Լամբրոնացու, Յովհ. Երզնկացու, Խ. Կեչառեցու, Ղ. Վանանդեցու եւ այլոց համապատասխան բանաստեղծութիւններից: Այս կերպ Նալեանը շատ որոշակի՝ իմաստասիրական, գաղափարական կապ, աղերս է ստեղծում Նարեկացու «Մատեան»ի եւ միջնադարեան բանաստեղծութեան միջեւ, ընդգծում նոյն ժողովրդի ծոցից դուրս եկած, տարբեր դարերի բանաստեղծներին գաղափարապէս միացնող կէտերը. սա յիշուի շատ ուշագրաւ երեւոյթ է: Յիշենք մէկ երկու օրինակ: Նալեանը «Մատեան»ի 55րդ գլխի «Խարմունք յիմարութեան եւ խաղալիք տղայականք» տողը մեկնաբանելիս գրում է. «Զի որպէս յիմարն է յառս եւ ի տուրս միշտ խաբի եւ պատրի ի խորամանկաց, այսպէս եւ յիմար բնութիւնս մեր ի փարչիկ կենցաղոյս միշտ խաբի եւ ո՛չ երբեք զգաստանայ»: Այդ նոյն գաղափարը հաստատելու համար նա բերում է Ղուկաս Վանանդեցու մի բանաստեղծութեան համապատասխան տողերը.

Ողբամ ըզբեզ զըժնեայ կենցաղ,
 Զի ո՛չ ունիս բընաւ դու աղ,
 Սիրողաց քոց ջամբես աւաղ,
 Բարեաց գործոց առնես յապաղ...
 Վայելմունք քո երազականք,
 Բայց կըշտամբանքն անեզրականք⁵²:

Նալեանը իր մեկնութիւնների մէջ ամէնից շատ օգտագործում է Ներսէս Շնորհալու երկերը («Յիսուս Որդի», «Վիպասանութիւն», տաղեր, դանձեր, շարականներ, հանելուկներ եւ այլն): Նալեան ուղղակի եւ անուղղակի կապեր, առնչութիւններ է տեսնում Նարեկացու եւ Շնորհալու ստեղծագործութիւնների միջեւ: Մեկնաբանը զարմանալի քաջատեղեակութիւն է հանդէս բերում այս հարցում եւս:

51. ՅԱԿՈԲ ՆԱԼԵԱՆ, Գիրք մեկնութեան աղօթից... էջ 630:

52. Աճղ, էջ 409:

Նալեանն առաջին գրականագետ (այսօրուայ հասկացողութեամբ), որ բացորոշում է «Մատեն»ի իմացարանութեան կենսական չափերը, հիմունքները, մատնացոյց անում նրա արուեստի ու գաղափարախօսութեան բարերար ազդեցութիւնը Հայոց միջին եւ նոր դարերի գիտական, բանաստեղծական մտքի վրայ:

* * *

Այսպէս, ուրեմն, 18րդ դարի կրթական-լուսաւորական շարժման խոշոր ներկայացուցիչ-նարեկագէտներ՝ Մխիթար Սեբաստացու եւ Պաղտատար Դպրի կրտսեր ժամանակակից Յակոբ Նալեանը նարեկացիագիտութեան պատմութեան մէջ բացում է նոր էջ: Նրա «Գիրք մեկնութեան աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ» վիթխարածաւալ քննական աշխատութիւնը նպաստում է 18-20րդ դարերի նարեկացիական շարժման պատմութեան զարգացմանը՝ չափ կողմերով: Այդ մեկնութիւնը միաժամանակ, ընթերցողին մղում է դէպի Նալեանի գրական ժառանգութեան ոլորտները. մեր ժամանակների ընթերցողի առջեւ խոյանում է աստուածաբան, իմաստասէր, բարոյագէտ, բանաստեղծ Յակոբ Նալեանի դիմանկարը: Դիմանկար, որին ցաւօք գրեթէ անծանօթ է արդի գրականագիտութիւնն ու պատմագիտութիւնը...:

ՇՈՒՇԱՆԻԿ ՆԱԶԱՐԵԱՆ

Résumé

UN SPECIALISTE DE GRIGOR NAREKAC'I
LE PATRIARCHE YAKOB NALIAN

CHOUCHANIK NAZARIAN

Une des figures illustres du mouvement d'illumination culturelle et restaurateur du 18^e siècle arménien, est sans aucun doute, le Patriarche de Constantinople, le grand théologien, philosophe, pédagogue, poète et traducteur: Yakob Nalian. On lui doit une dizaine d'œuvres philologiques et critiques. Mais il faut dire que la pointe de sa création littéraire est constituée du Commentaire au «Livre des lamentations» du grand génie littéraire et poétique du X^e siècle: Grigor Narekac'i.

Yakob Nalian étudie et commente le «Livre» comme une œuvre sacrée, comme une création céleste. Le Commentateur planifie son œuvre en trois parties: 1^o) démontrer les liens idéologiques et les points d'inspiration entre le «Livre» et la Bible. 2^o) Dénoter les aspects généraux de la foi chrétienne ainsi que les éléments moraux, théologiques et scientifiques que l'on considérerait nécessaires à cette époque pour la rénovation et la consolidation de la vie intérieure et spirituelle du fidèle chrétien appartenant à l'Eglise Apostolique arménienne. 3^o) Offrir aux générations contemporaines arméniennes, des données solides et vastes fondées sur la lecture et les éléments inclus dans le «Livre» de Grigor Narekac'i, leur faisant connaître la science, la littérature, la philosophie et l'art de la tradition classique et médiévale arménienne. Nalian considère avec conviction ce «Livre» comme une recherche profonde des relations entre l'homme et Dieu manifesté par notre sauveur Jésus-Christ, mais il n'oublie pas aussi d'en affirmer l'aspect lyrique, poétique et intellectuel. Pour Nalian, Narekac'i, par la foi, la science divine et les conseils spirituels, en pleurs et en douleurs, souriant et confiant, nous dévoile les secrets de la vie réelle et nous démontre comment l'homme, loin de la foi, peut facilement basculer dans les abîmes, et quelles sont les voies de la rénovation spirituelle. La lecture de Nalian du «Livre», est à considérer un des points de départ les plus importants pour la connaissance profonde de Grigor Narekac'i, surtout à l'époque de la nouvelle Renaissance littéraire et culturelle arménienne.